

Կանայք եւ քաղաքականությունը. «Արմենիա Now» հատուկ թողարկում

Ջոն Դյուզ, «Արմենիա Now» խմբագիր

Անցյալ տարվա սեպտեմբերին կանանց նախաձեռնող խմբի գեկույցում վիճակագրական տվյալներով արձանագրվեց մի փաստ, որը թեև հայտնի էր, սակայն քննարկման նյութ չի դառնում. Հայաստանի քաղաքական ասպարեզում գերիշխում են տղամարդիկ, չնայած բնակչության մեծ մասը կանայք են:

(Կանանց՝ բնակչության 52 տոկոս պաշտոնական տվյալը չի արտացոլում այն փաստը, որ հազարավոր տղամարդիկ, որոնց բնակության վերջին հայտնի վայրը Հայաստանն է, այժմ Ռուսաստանում կամ այլ երկրներում են: Կանանց կազմակերպությունների ղեկավարները պնդում են, որ իրականում այժմ կանայք կազմում են հանրապետության բնակչության 60 տոկոսը:)

Երբ ծրագրում էինք հոդվածաշար պատրաստել այս հարցի մասին, մենք մտադիր էինք այն անվանել «Կանայք քաղաքականության մեջ»: Սակայն հետո հասկացանք, թե որքան աղքատիկ կլինեք այդ թողարկումը: Այնպես որ, այս թողարկման մեջ դուք կգտնեք նաև հոդվածներ այն կանանց մասին, որոնք չեն զբաղվում քաղաքականությամբ, սակայն կարող էին, եթե Հայաստանի բնակչության մեծամասնության համար պայմանները բարենպաստ լինեին:

Կանայք կազմում են խորհրդարանի ընդամենը 5 և տեղական կառավարման մարմինների 2 տոկոսից էլ պակասը: Ինչո՞ւ:

Հիմնական պատճառներն առնչվում են հայ ընտանիքի ավանդույթներին ու Հայաստանի քաղաքական դաշտի տխրահռչակ համբավին: Այս և որոշ այլ պատասխաններ դուք կգտնեք հատուկ թողարկման մեջ:



Հայաստանի բնակչության մեծ մասը կանայք են

Լուսանկարը՝ Անահիտ Գալստյանի

Իրենց հետքը թողնելով տղամարդու աշխարհում.

Ջուլյա Զակոբյան

հայ կանայք կարող են լինել և՛ մայր, և՛ պետական գործիչ

Հայաստանում քաղաքականությունը տղամարդու գործ է: Սակայն որոշ կանայք պատրաստ են փոխելու այդ վիճակը:

Խորհրդարանական ընտրությունների նախօրեին գեղեցիկին հարցերը կարող են բանավեճի առարկա դառնալ: Կանայք ասում են, որ պատրաստ են մտնելու քաղաքականություն՝ չնայած անհավասար հնարավորություններին: Բանավեճ այն մասին չէ, թե արդյո՞ք կանայք պատրաստ են մրցակցելու, այլ արդյո՞ք նրանց թո՞ւյլ կտան մասնակցել այդ մրցակցությանը: Հիմնական հարցն այն է՝ արդյո՞ք կանայք կցանկանան զբաղվել քաղաքական «կեղտոտ խաղերով»: Մինչև այսօր այդ հարցի պատասխանը եղել է «ոչ»: Բայց քանի որ զարմանը կայանալիք ընտրությունները դիտվում են որպես թեստ՝ արդյո՞ք Հայաստանը, ի վերջո, կարող է արդար ընտրություններ անցկացնել (և, այդպիսով, իրավունք վաստակել ստանալու «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի 235 միլիոն դոլարը), ուստի դրանք վճռորոշ նշանակություն ունեն մի շարք առումներով, այդ թվում՝ կանանց համար քաղաքականություն տանող դուռը բացելու...

Թղթե երազանքներ

1993 թվականին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի կոնվենցիան կանանց դեմ ամեն տեսակի բռնությունների վերացման մասին: Այդ կոնվենցիայի համաձայն՝ իշխանությունները պարտավոր են գործնական միջոցներ ձեռնարկել հանրային քաղաքականության մշակման և կիրառման մեջ կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովելու համար: Անցել է 13 տարի, սակայն այդ ոլորտում նկատելի առաջընթաց չկա: Հայ կանանց եռամիլիոն արտահայտությունն է գտնում հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնք իրենց կարգավիճակով ի գործու են ուղղակիորեն ազդելու քաղաքականության վրա: Կանայք կազմում են Հայաստանի բնակչության 52 տոկոսից ավելին, իսկ նրանց մեկ-երրորդից ավելին բարձրագույն կրթու-

թյուն ունի: Ըստ Սահմանադրության՝ Հայաստանում կանայք և տղամարդիկ ունեն նույն քաղաքական, սոցիալական և քաղաքացիական իրավունքները: Սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ իրավունքները հավասար չեն կիրառվում:

Թեև կանայք ներկայացված են բոլոր նախարարություններում և կառավարական մարմիններում, գործադիր իշխանությունը, հասարակական կառավարման համակարգը և օրենսդիր մարմինը գեղեցիկին անհավասարության բուրգ է. որքան բարձր է պաշտոնը, այնքան քիչ հավանական է, որ այն կին է զբաղեցնում:

Գեղեցիկին հարցերով մասնագետ Ջեմմա Զատրայանի խոսքերով՝ քաղաքականությունը Հայաստանում «տղամարդկանց ակունք է», որտեղ կանայք օտարված են որոշում կայացնելու գործընթացից և սակավաթիվ կին քաղաքական գործիչներն ի վիճակի չեն ինչպես հարկն է ներկայացնելու նույնիսկ կանանց հարցերը, ուր մնաց հասարակական հնչելության հարցեր:

Որտե՞ր են կանայք

- 33 Ազգային ժողովի 131 պատգամավորներից ընդամենը 7-ն են կին՝ ամենացածր ցուցանիշը եվրոպական երկրների մեջ: (Ադրբեջանում կանայք կազմում են խորհրդարանի պատգամավորների 12, Վրաստանում՝ 9, իսկ Հայաստանում՝ 5 տոկոսը:)
- 16 նախարարներից միայն մեկն է կին՝ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարը:
- 926 քաղաքապետներից ու գյուղապետներից միայն 16-ն են կանայք:
- Հանրապետության 52 տոկոս մեծամասնությունը որոշում կայացնելու գործընթացում 6 տոկոսից պակաս ներկայացուցչություն ունի:

Այս համարում	հանգանակություն	էջ 5
Եռագույն կապտուկներ	Թռչելու հարկադրված	էջ 6
Յոթ տիկնայք Հայոց խորհրդարանի	Միջավայր՝ փոփոխությունների համար	էջ 6
Փիլիսոփայական մոտեցում քաղաքականությանը	Ամբողջական փաթեթ	էջ 6
Արտաքին գործերից՝ միջոցների	Մարդու իրավունքների պաշտպանուհին	էջ 8
	Կնոջ հայացք	էջ 8

Իրենց հետքը թողնելով տղամարդու աշխարհում.

հայ կանայք կարող են լինել և մայր, և պետական գործիչ

«Հայաստանում քաղաքական մշակույթ են դարձել ոչ թե իմիջի ձևավորումն ու քաղաքական պատճառների մշակումը, այլ կեղտոտ ընտրություններն ու քաղաքական հակառակորդների վարկաբեկումը. - ասում է Հասարակական համալսարանի կրթության կամայք ասոցիացիայի հիմնադիրն է: - Փողոցից չէ, որ Հայաստանում որոշ քաղաքական հարցեր քննարկվում և լուծվում են սաունաներում ու ռեստորաններում: Կանանց համար բանակցելու այս ձևերն ընդունելի չեն: Եվ, իհարկե, տղամարդիկ չեն ցանկանա բացել իրենց «ակունքի» դռները կանանց առջև»:

Հայ կանայք, որոնք, հնարավոր է, չեն ցանկանա այդ «ակունքի» անդամ դառնալ, այդուհանդերձ, ցանկանում են ծայրի իրավունք ունենալ:

Անցյալ սեպտեմբերին 22 կուսակցությունների և 40 ՀԿ-ների ներկայացուցիչներից կազմված նախաձեռնող խումբը առաջարկների փաթեթ է ներկայացրել Ազգային ժողով: Ըստ առաջարկված օրինագծի՝ կուսակցական համամասնական ցուցակներում կին թեկնածուները պետք է լինեն առնվազն 25 տոկոս՝ ներկայիս 5-ի փոխարեն (ի վերջո, ընդունվեց 15 տոկոսը):

«Երկրի ղեկավարությունը խոչընդոտում է երկրի զարգացումը, քանի որ անտեսում է բնակչության կեսից ավելիի ներուժը, ջանքերն ու կրթությունը», - ասում է նախաձեռնության կողմնակից, «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցության անդամ Անահիտ Աղոյանը:

Ընդդիմության ակտիվ մասնակից Խաչատրյանը 2005 թվականին առաջադրել էր իր թեկնածությունը Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի ընտրություններում: Նա հավաքեց ձայների 12 տոկոսը և տաճուկ տվեց Քազիկ Բեգլարյանին, որը ստացավ 91000 ընտրողների ձայների 86 տոկոսը:

Այդուհանդերձ, Խաչատրյանը համոզված է, որ իր փորձը կբաշխելի կանանց իրենց թեկնածությունն առաջադրել:

«Իմ փորձը ցույց տվեց, որ հասարակությունը պատրաստ է քվեարկել իր ցանկանալի, - ասում է նա: - Մարդիկ հոգնել են կոռուպցիայի ընտրություններից, որոնք շատ հեռու են ժողովրդավարական ու թափանցիկ լինելուց: Սակայն իշխանությունները, կարծես, կանանց մոլի հակառակորդներն են»:

Խաչատրյանը հիշում է, թե ինչպես է մեկնաբանել իր մրցակիցը ընտրություններում տարած հաղթանակը. «Խայտառակություն կլիներ, եթե ես պարտվեի կնոջը»:

Բեգլարյանի դիրքորոշումը բնորոշ է հայ տղամարդկանց: Նահապետական կարծրատիպերը գերակայում են հասարակության մեջ, որտեղ շատերն այն կարծիքին են, որ կնոջ գործը երեխա բերելը, մեծացնելն ու տունը կարգի պահելն է: Չնայած փոփոխվող ժողովրդագրությանը՝ այսօրվա Հայաստանում գենդերային հարցերը սահմանվում են կնոջ՝ որպես հնազանդ տնային տնտեսուհու և տղամարդու՝ որպես հաց վաստակողի պիտակներով:

Ավանդապահների կարծիքով՝ քաղաքականությանը զբաղվելը կկտրի հայ կնոջն ընտանիքից, որը պատմականորեն համարվել է ազգի սյունը: Նրանք նաև այնուամենայն էլ, թե աշխարհի երկրների մեծ մասում կանայք աշխատանքի, որոշում կայացնելու և սեփականություն ունենալու ավելի քիչ հնարավորություն ունեն:

Սակայն գենդերային հարցերով մասնագետները պնդում են, որ միտումները զարգանում են իրար հակառակ: Հայ գենդերային մասնագետները նշում են, որ զարգացած երկրներում կանայք 30-40 տոկոս ներկայացուցչություն ունեն իշխանական կառույցներում: Պատգամավոր կանանց ամենաբարձր տոկոսը Շվեդիայում (45%), Նորվեգիայում (38%) և Ֆինլանդիայում (37%) է: Իսկ 1999 թվականին Շվեդիան դարձավ առաջին երկիրը, որտեղ կին նախարարները գերազանցեցին տղամարդ նախարարներին:

Գենդերային առումով ավելի հավասարակշիռ իշխանություն գտնելու համար Հայաստանին պետք է ընդամենը հայացք գցել հարևանների վրա:

Վրաստանում Նինո Բուրջանաձեն զբաղեցնում է խորհրդարանի խոսնակի պաշտոնը (ըստ Վրաստանի Սահմանադրության՝ դա թիվ 2 պաշտոնն է Վրաստանի իշխանական համակարգում): Վրաստանի 235 անդամ ունեցող խորհրդարանում կա 22 կին պատգամավոր, ինչը կազմում է 9 տոկոս: Արթուրյանի խորհրդարանի 125 անդամից կին է 15-ը (12 տոկոս), ներառյալ՝ երկրի առաջին տիկին Մեիրիթան Ավիան:

Հայ փորձագետները նշում են, որ Հայաստանում, ընդհանուր առմամբ, կանանց դեմ



Մայրերի մեծ մասն իրենց դստեր համար նախընտրում է հարուստ ամուսին, քան լավ վճարվող աշխատանք վկայում է հառատայանի հետազոտությունը:

խտրականություն չկա, դա ազգային մտածելակերպում ամրագրված երևույթ է: Քաղաքականության մեջ տեղ գտած գաղափարախոսական խզումը ներկա սոցիալ-քաղաքական իրավիճակի արդյունք է:

Գործազրկության պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում գործազուրկների մեծ մասը կանայք են, և որ կանանց գործազրկության մակարդակն աճել է:

Հասարակական և քաղաքական ոլորտներում զբաղված կանանց շրջանում ազգագրագետ Հրանուշ Խառատյանի անցկացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասն իրենց դստեր համար նախընտրում է հարուստ ամուսին, քան լավ վճարվող աշխատանք: Կանայք դա բացատրում են նրանով, որ աշխատանքը կարելի է կորցնել, իսկ հարուստ ամուսինն անկախության և ապահովության երաշխիք է:

Փորձագետների կարծիքով՝ այդ մտայնությունը ցույց է տալիս, որ կանայք ենթագիտակցորեն ապավինում են տղամարդկանց՝ անտեսելով սեփական հաջողության հնարավորությունը:

Օջախ պահողներ, ոչ թե օրենսդիրներ...

Քաղաքագետ Երվանդ Բոգոյանի կարծիքով՝ հայ կանայք արդեն «մեծացել» են միայն «օջախն ու ավանդույթները պահպանողի» իրենց կարգավիճակից: Սակայն պատմությունը բարեհաճ չի եղել կանանց իշխանական նկրտումների նկատմամբ:

«Բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում կանայք պետություն են ղեկավարում կամ մասնակցում են ղեկավարմանը կամ ուղղակիորեն, կամ անուղղակիորեն - ասում է Բոգոյանը, որը «Հեռանկար» ՀԿ նախագահն է: - Հայոց թագուհիները նույնպես մեծ դեր են ունեցել երկրի բարգավաճման գործում: Սակայն երբ Հայաստանը կորցրեց պետականությունը (14-րդ դարում), ազգապահպան ֆունկցիան իր վրա վերցրեց եկեղեցին, որտեղ, ինչպես հայտնի է, կնոջ համար տեղ չկա»:

Հայաստանը կորցրեց պետականությունն ավելի վաղ, քան կիսյունվեին Վրաստանի Թամար թագուհու կամ Ռուսաստանի Եկատերինա Մեծի մակարդակի կանայք:

(Օրինակ՝ 12-րդ դարում Թամար թագուհու օրոք Վրաստանը բարգավաճեց ու հզորացավ մի ժամանակ, երբ Ֆեոդալական երկպառակությունները բզկտում էին հարևան պետությունները):

«Թամարը պաշտամունքային անձնավորություն է Վրաստանում և վրացիների հիշողության մեջ դրոշմվել է որպես կարկառուն պատմական գործիչ: Հավանաբար, դա է պատճառը, որ հարևան Վրաստանում կանայք ավելի անկախ ու ինքնավստահ են և հաճախ բարձր պաշտոններ են զբաղեցնում», - ասում է Բոգոյանը:

Հայոց պատմությունը գրեթե չունի կանանց օրինակներ, որոնք երկրի համար դարակազմիկ որոշումներ են կայացրել: Սակայն այն պարունակում է շատ կանանց օրինակներ, ովքեր մեծ ներդրում ունեն ազգային ինքնության պահպանման գործում: Հայերը երկար ժամանակ ստիպված են եղել որպես ազգ գոյատևել

լեզվի և մշակույթի շնորհիվ: Եվ պատմաբանները միահամուռ են, որ հայ կանայք մեծապես նպաստել են և՛ լեզվի, և՛ մշակույթի պահպանմանը:

19-րդ և 20-րդ դարերը շրջադարձային եղան հայ կանանց համար: Բարձրացավ հասարակության մեջ նրանց կարգավիճակը, բայց ավելի շատ ընտանիքի և հասարակության մեջ նրանց դերի գնահատման և ոչ թե ինչ-որ ֆեմինիստական գաղափարախոսության շնորհիվ:

20-րդ դարի սկզբին կանայք ստանձնեցին սոցիալական առաջնորդների դերը՝ հիմնելով դպրոցներ, մշակութային կենտրոններ և այլն: Իսկ երբ 1920 թվականին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, կանանց հարցում տեղի ունեցան նոր, կարևոր փոփոխություններ:

Կոմունիզմի գաղափարախոսությունը՝ «հավասարություն բոլորի համար», անդրադառնում էր նաև սեռերի հարցին: Իրավունքների հավասարության մասին դեկրետը ոչ ավանդական աշխատանքների հնարավորություն տվեց կանանց տնտեսության, կրթության և գյուղատնտեսության բոլոր հաստիճաններում: Հարյուրավոր արհմիություններ քարոզում էին արևմտյան ապրելակերպին հակադրվող եռանդուն «խորհրդային կնոջ» կերպարը:

Հայաստանում, ինչպես և բոլոր խորհրդային հանրապետություններում, կանայք կազմում էին Գերագույն խորհրդի (խորհրդարանի համարժեքը, սակայն հիմնականում ձևական լիազորություններով) 30-40 տոկոսը:

Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին գումարման 256 պատգամավորներից միայն երեքն էր կին: Երկրորդ գումարման 203 պատգամավորներից կին էր 75-ը, իսկ 1971 թվականին ութերորդ գումարման 310 պատգամավորներից՝ արդեն 101-ը:

Պատմաբաններն ու սոցիոլոգները համակարծիք չեն կառավարման համակարգում հայ կանանց վրա խորհրդային իշխանության 70 տարիների ունեցած ազդեցության գնահատման հարցում: Ոմանք պնդում են, թե խորհրդային ռեժիմն այնպիսի ազատություն տվեց հայ կնոջը, որը նա երբեք չէր ունեցել և իսկապես խթանեց կանանց քաղաքական ակտիվությունը: Մյուսներն այն կարծիքին են, թե կոմունիզմի ժամանակաշրջանն ավելի վատաբերեց գենդերային հարցերի վիճակը, քանի որ հավասարությունը զուտ քարոզչություն էր, իսկ իրականում ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ ոչ թե ընտրվում էին, այլ նշանակվում Մոսկվայի կողմից:

Սոցիոլոգ Մարինա Օհանյանը տեսնում է երևույթի երկու կողմերը:

«Շատ եվրոպական երկրներ կարող էին նախանձել իրավունքների հավասարությանը Հայաստանում: Դարասկզբին, երբ հայ կանայք կարող էին պատգամավոր ընտրվել (կարևոր չէ, որ քաղաքականությունը թելադրվում էր Կրեմլից), որոշ եվրոպական երկրներում կանայք ընտրություններին մասնակցելու իրավունք չուներին», - ասում է կանանց հարցերով զբաղվող «Լիզա» ՀԿ հիմնադիր Օհանյանը:

«Սակայն մեկ-երկու տասնամյակ անց եվրոպացի կանայք մեծ հաջողությունների հասան գենդերային հարցերում, քանի որ այնտեղ կանայք պայքարում էին իրենց իրավունքների համար՝ քայլ առ քայլ, տարեցտարի»:



Հասարական ասում է, որ Հայաստանում քաղաքականությունը տղամարդկանց ակունք է:

«Հպարտությունն ու իշխանությունը» սպասման մեջ...

2004 թվականին ՀՀ կառավարությունը ընդունեց կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի ամրապնդման ազգային ծրագիր: Այն կազմված է ութ բաժնից և պետք է իրականացվի մինչև 2010 թվականը: Ծրագիրը կոչված է «ապահովելու իրավունքների և հնարավորությունների հավասարությունը կանանց և տղամարդկանց համար որոշումներ ընդունելու գործընթացներում և սոցիալ-քաղաքական ոլորտներում»:

Գենդերային հարցերում հավասարակշռություն հաստատելու կառավարության ծրագիրը թելադրված է մինչև 2020 թվականը որոշում կայացնող մարմիններում կանանց ներկայացվածության աստիճանը առնվազն 40 տոկոսի հասցնելու Եվրախորհրդի պահանջով: 2004 թվականից ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Հարավային Կովկասում գենդերային և քաղաքականության նախագիծը աջակցում է գործողությունների ազգային ծրագրին: 1,83 միլիոն դոլար բյուջեով եռամյա ծրագրի նպատակն է մշակել գենդերային քաղաքականություն և նախաձեռնել տարածաշրջանային գենդերային երկխոսություն:

Գործողությունների ազգային ծրագրին աջակցում են նաև մեծ թվով կանանց կազմակերպություններ, ներառյալ՝ Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիան (ՀԿ-ԿԱ):

1995 թվականին հիմնված ասոցիացիան առաջարկում է կին առաջնորդների բացահայտման, վերապատրաստման և կրթության ծրագիր: ՀԿ-ԿԱ 30 մասնաճյուղեր սփռված են Հայաստանի 12 մարզերում: Ավելի քան 600 կանայք մասնակցել են ասոցիացիայի կազմակերպած վերապատրաստումներին, և նրանցից շատերն աշխատում են տարբեր կառավարական մարմիններում: Ասոցիացիայում հաճախակի հյուր են լինում հայ քաղաքական գործիչները, որոնք քաղաքագիտությանը նվիրված սեմինարներ են անցկացնում:

Ծրագիրն ապահովում է վերապատրաստում սկզբնական և բարձր մակարդակների համար: Ծրագրում ընդգրկված են կին գործիչներ ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմության ճամբարներից:

Մարիաննա Գրիգորյան

Եռագույն կապտուկներ. դրոշակա կիրճ՝ պայքարում

Գայանե Աշուղյանը ոչ քաղաքական գործիչ է, ոչ պաշտոնյա, ոչ էլ մաման հավակնություններ ունի, սակայն եղել են պահեր, երբ նրան հսկել է մի ողջ «թիկնագոր»:

40-ամյա Գայանեն 2003-ի մախագահական ընտրություններից հետո սկիզբ առած ընդդիմադիր հանրահավաքների մշտական մասնակիցն էր:

Աշուղյանին մինչև այսօր հաճախ ճանաչում են ոստիկանության աշխատակիցները:

Նա դրոշակա կիր էր:
Եռագույն մեծ դրոշը ձեռքին ծածկաձևով՝ երեք երեխաների միայնակ մայրը ոգևորում էր ցույցերի և երթերի մասնակիցներին և տանում առաջ:

«Եղել ա՛ փող չեն ունեցել, մարշրուտկից թռել, եկել են ցույցի: Տենց մի ցույց ու երթ չի եղել, որ մասնակցած չլինեմ,- ասում է Գայանեն: - Միտինգներին մասնակցելու համար երեք անգամ դատվել են, երկու անգամ տուգանվել, մի անգամ կալանվել, երկու անգամ էլ էնքան են ծեծվել, որ վրես սպիտակ տեղ չի մնացել: Բայց իմ պետքը չէր: Ես պայքարում էի բոլորի համար, պայքարում էի, որ լավ լինի»:

Ոստիկանության և անվտանգության ծառայության մի քանի թիկնեղ աշխատակիցներից կազմված «թիկնագորը» հսկում էր միջահասակ կնոջը, որ ցույցերի ժամանակ չկարողանար տնից դուրս գալ:

«Ինձ ասեցին՝ որ խոսում ես, բոլորին հավաքում ես գլխիդ, եթե էլի ցույցի գնաս, գլուխդ կշարդենք, կդատենք, լույսդ ու ջուրդ կկտրենք, չենք թողի ապրես,- պատմում է Գայանեն: - Ասեցին՝ կզնա՞ս էլի, ասեցին՝ հա: Դրանից հետո «ախրանաս» կանգնում էր պաղտեղիս մոտ, որ չկարողանար տնից դուրս գալ: Ես էլ բարձրանում էի 9-րդ հարկ, էնտեղից՝ կռիչ, մյուս պաղտեղից իջնում ու թռնում միտինգի»:

1990-ականների սկզբին Գայանեի ամուսինը մեկնել է Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի, և այդպես էլ մոռացել ընտանիքի գոյության մասին:

Ծայրահեղ դժվարությունների ու դառնությունների մեջ Գայանեն միայնակ մեծացրել է իր երկու տղաներին՝ Յայկին ու Գոռին, և աղջկան՝ Նունեին, որը տառապում է էպիլեպսիայից: Ասում է, որ դառնության իսկական «համը» զգաց 1999-ի հոկտեմբերի 27-ին:

«Իմ պայքարը սկսվեց 1999-ի հոկտեմբերի 27-ից հետո, երբ սպանեցին Կարեն Դեմիրճյանին ու Վազգենի Սարգսյանին: Ես հասկացա, որ պիտի պայքարեմ,- ասում է Գայանեն: - Դրա-



Ես հասկացա, որ պետք է պայքարել...

նից հետո մախագահական ընտրություններն էին, ու էդ անարդարությունը վրես շատ էր ազդում: Գնում էի ընտրության, տեսնում՝ տարիներ առաջ մեռած մերս ինձնից առաջ արդեն «քվեարկել» է: Էդ ամեն ինչից գժվում էի ու որոշել էի մինչև վերջ գնալ»:

Գայանեի պայքարն առաջին անգամ «նկատում» են 2003-ի ապրիլի 7-ին, երբ նա միանում է ընդդիմադիր կանանց երթին:

Երեկոյան Աշուղյանին «Օրբան» բարեգործական հիմնադրամի մոտից, ուր նա աշխատում էր որպես խոհարարի օգնական, մի քանի տղամարդ թանցուկ են անում և տանում «բաժին»՝ Կենտրոնի ոստիկանություն:

«Գիտեի, որ բռնելու են, ու չզարմացա: Բաժնում ինձ սպառնացին, ասեցին, որ վերջս լավ չի լինի, եթե շարունակեմ ցույցերին մասնակցել, տուգանեցին ու խոստացան, որ եթե մյուս անգամ աչքներովս ընկնեմ՝ վերջս լավ չի լինի, բայց ես էլի շարունակեցի», - պատմում է Գայանեն:

Մյուս անգամ Գայանեն «օրգանի» աշխատակիցների աչքին է ընկնում երկու օր անց՝ մախագահ Ռոբերտ Քոչարյանի երդման արարողության օրը, երբ ընդդիմությունը կազմակերպում է հերթական բազմահազարանոց երթը:

Գայանեն եռագույնը ձեռքին կրկին առաջին շարքում էր: Ոստիկանությունը փորձում է ճնշել երթը՝ փակելով ճանապարհը և մահակներով հարձակվելով ժողովրդի վրա:

«Յենց տեսա՞ Սադոյանին (Արշակ Սադոյան, ԱԺ պատգամավոր) խփեցին, արյունը խփեց գլխիս, դրոշակս առա ու հարձակվեցի կարմիր բերետավորների վրա,- հիշում է Գայանեն: - Դրոշակս բռնեցին՝ չտվեցի, քաշեցին մտցրին մեքենան: Ժողովուրդը գոռում էր, ես էլ էի գոռում, ասում էի՝ մի մտածեք, ուժեղ եղեք»:

Գայանեն ասում է, որ ոստիկանները ծեծում են իրեն:

«Վրես մի հատ սպիտակ տեղ չէր մնացել: Ասում էին՝ էլի կմասնակցե՞ս, ասում էի՝ հա, չափալախում էին: Յետո տեսան էն՝ հանձնվում, քցեցին գետնին, քացով էնքան ծեծեցին, որ հոգնեցին», - հիշում նա:

Մի քանի օր բանտում մնալուց հետո Գայանեն դուրս է գալիս: Մալաթիայի ոստիկանները սկսում են տարբեր առաջարկներ անել՝ փող, հող, տուն՝ փոխարենը պահանջելով, որ չմասնակցի հավաքներին:

Գայանեն սեփական բնակարան չունի և ապրում է եղբոր ընտանիքի հետ՝ երկուսենյականոց փոքր բնակարանի մեկ սենյակում՝ ծայրահեղ մեղ պայմաններում, սակայն մերժում է իրեն «ապահովելու» բոլոր առաջարկները: «Ասեցին՝ դու ի՞նչ ձեռք մարդ ես, բա ի՞նչ ա ուզածդ, որ փող չես ուզում: Ասե-

ցի՛ դուք գիտեք՝ ժողովուրդը եք: Իմ ուզածն էն ա, որ մուրացկաններ չլինեն, մարդիկ գիբիլից ուտելիք չհանեն, ամեն մեկը նորմալ ապրի: Գիտեք՝ ձեզ ժողովուրդը բանի տեղ ա դնում: Ես հենց ձեր, մեր, բոլորի համար եմ պայքարում ու պայքարելու եմ մինչև հաղթանակ»:

Նման պատասխանից մի քանի օր հետո, երբ Գայանեն մասնակցում է մտացույցին, նրա վրա ճնշում գործադրելու նպատակով սկսում են օգտագործել երեխաներին:

Նստացույցի ժամանակ տեղեկանում է, որ 16-ամյա աղջկան՝ Նունեին, ոստիկանները տարել են «բաժին»:

«Նունեիս պատանդ էին վերցրել ու պայման էին դրել՝ մամադ ցույցի չի մասնակցի, կգա ոստիկանություն, կթողնենք՝ գնաս: Չգիտեի՝ ինչ անեի»:

Գայանեի վիճակը տեսնելով՝ ներկաներից մեկը զանգահարում է մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանին:

«Երեխուն կես ժամ հետո բաց թողեցին: Բայց ոստիկաններն էնքան ստոր էին եղել, որ երեխու էպիլեպսիայի դեղերը, որ միշտ հետն էր, ձեռից առել էին: Բա դրանք մա՞րդ են», - բորբոքվում է Գայանեն:

Չաջորդ անգամ Գայանեին կալանում են տխրահռչակ ապրիլյան գիշերը, երբ ոստիկանները մահակներով ծեծում են Յայաստանի ընդդիմության մնացորդներին: Գայանեն ասում է, որ չնայած բազմաթիվ բռնություններին ու հալածանքներին, ինքը երբեք չի վախեցել և միշտ ձգտել է առաջին շարքերում լինել:

«Ես իմ երկրի դրոշն եմ բռնել ու պայքարել հանուն իմ երկրի ճիշտ ապագայի», - ասում է դրոշակակիրը:

Նա արցունքներով է հիշում իր կյանքի ամենահուզիչ պահերից մեկը, երբ հայ մեծ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, գնահատելով Գայանեի անկյուն պայքարը, հրավիրել է նրան իր տուն:

«Երբ մտա տիկին Կապուտիկյանի տուն, ասեց՝ Գայանեն եկա՞վ: Ասեցին՝ այո: Սոտեցավ ինձ, չոքեց դիմացս ու սկսեց ձեռքերս համբուրել: Խառնվեցի իրար, հուզվեցի: Չոքեցի, ասեցի՝ ի՞նչ եք անում,- հուզված պատմում է Գայանեն: - Նա ամուր գրկեց ինձ ու ասեց՝ աղջիկս, դու արժանի ես...»:

«Թեև քաղաքական դաշտում այս երկու ճամբարներն անհաշտ են, վերապատրաստումների ընթացքում նրանք շատ լավ լեզու են գտնում միմյանց հետ,- ասում է ասոցիացիայի մախագահ Ջեննա Չասարյանը: - Դա շատ կարևոր է, քանի որ կանայք պետք է հասկանան, որ կանանց շարժմանը պետք է աջակցեն կանայք, նրանք պետք է միասնական լինեն իրենց նպատակներին հասնելու համար»:

Չասարյանը նշում է, որ վերապատրաստման ընթացքում անդրադառնում են ամենատարբեր հարցերի՝ քաղաքագիտության հիմնադրույթներից մինչև բանավիճելու հմտություններ: Նրա կարծիքով՝ լավ քաղաքական գործիչը «մախառաջ լավ հռետոր է, իսկ հրապարակային լավ ելույթը ենթադրում է մի շարք տարրեր, որոնք, ցավոք, ծանոթ չեն քաղաքական գործիչների մեծ մասին»:

Գենդերային հարցերի մեկ այլ մասնագետ՝ Կանանց հանրապետական խորհրդի մախագահ Նորա Չակոբյանը, տեղյակ է կանանց պասիվությանը: Անցյալ տարի խորհուրդն անցկացրեց հարցում 1200 կանանց շրջանում և պարզեց, որ կանանց հավասարության կարգերը հասարակության համար այնքան հրատապ չեն, որքան առաջնորդության ձգտող կանանց համար: Չարցման արդյունքում պարզվեց, որ

- կանանց 30 տոկոսը չի ուզում տղամարդկանց հավասար իրավունքներ
- 47 տոկոսը բավարարված է գենդերային ներկա հավասարակշռությամբ
- 50 տոկոսը փոփոխություն է ուզում:

«Կանայք որպես քաղաքական ուժ պահանջված չեն, ինչը մասամբ բացատրվում է սեփական սոցիալական դերի թերագնահատմամբ,- ասում է Չակոբյանը: - Հայ կանայք բնույթով շատ համբերատար ու հանդուրժող են, նրանք ուզում են հանդուսնալ իրենց հորը, եղբորը, իսկ հետո՝ ամուսնուն, որոշ դեպքերում՝ ի վնաս իրենց»:

2002 թվականին Կանանց հանրապետական խորհուրդը և 25 ՀԿ-ներ հիմնեցին Հայաստանի խաղաղության կոալիցիան՝ գենդերային հարցերի ավելի լավ ըմբռնման նպատակով: ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամի աջակցությամբ կոալիցիան հրատարակում է «խաղաղություն ամենցուն» ամսագիրը,

որը լուսաբանում է հայ կանանց հասարակական և քաղաքական գործունեությունը Երևանում ու մարզերում: Այն նաև անդրադառնում է կլոր սեղանների քննարկման արդյունքներին և ազդարարում սեմինարների և վերապատրաստումների մասին:

«Հայաստանի ՋԼՄ-ներն անտարբեր են գենդերային հարցերի նկատմամբ, թեև լրագրողների մեծ մասը կանայք են», - ասում է Չակոբյանը, որը հայտնի էր Հայաստանում դեռ խորհրդային ժամանակներում, երբ ղեկավարում էր Մշակութային կապերի հայկական կոմիտեն:

«Գենդերային հաջողության բանաձևը շատ պարզ է՝ քաղաքական կամք, կանանց ներկայացվածություն քաղաքական կուսակցություններում և արդար ընտրություններում ու ՋԼՄ-ների աջակցություն», - ասում է Չակոբյանը:

«Տվեք մեզ արդար ընտրություններ, և եթե կանայք տանով տան, միայն այդ ժամանակ կարելի է ասել, թե նրանք մրցունակ չեն»:

Հայաստանի քաղաքական ասպարեզում, որում տղամարդկանց գերիշխանություն է, շատ են այն գործիչները, որոնք սատարում են գենդերային հավասարությունը:

«Արդարություն» դաշինքի քարտուղար, պատգամավոր Գրիգոր Չարությունյանն ասում է, որ կաջակցի ցանկացած մախաձեռնություն, որն ուղղված է կին պատգամավորների թվի ավելացմանը խորհրդարանում:

«Ես միշտ դրական եմ վերաբերվել հասարակական կամ քաղաքական ոլորտում հանդես եկող կանանց և երբ Մեղրու շրջանային խորհրդի գործկոմի մախագահ էի, շրջխորհրդի կազմում շատ կանայք կային», - ասում է նա:

«Մտնեցումը կանանց՝ որպես տնային տնտեսուհիների, իր դարձ ասլոն է, քանի որ հայ կանայք տղամարդկանց հավասար ապրուստ են վաստակում: Ես համամիտ չեմ այն կարծիքին, թե հասարակական գործունեությունը կկտրի կանանց ընտանիքից: Ի վերջո, սա 21-րդ դարն է: Հայ կնոջ կյանքը փոխվել է. վճարքի, ամանվճարող մեքենաներն անում են այն աշխատանքը, որ առաջ խլում էր կնոջ ողջ ժամանակը»:

Պատգամավոր ձեռնպահ է մնում առաջարկելուց, որ տղամարդիկ կանանց հավասար վճարք անեն կամ աման վճարեն: Եվ նույնիսկ նրա առաջադիմական մոտեցման մեջ բացահայտվում է ավանդական հիմքը, երբ պատգամավորն ավելացնում է. «Ես համոզված եմ, որ կանանց ներկայությունը խորհրդարանում մթնոլորտն ավելի բարյացակամ ու հանդուրժող կդարձնի»:

Նախկին վարչապետ, Ազգային ժողովրդավարական միության մախագահ Վազգեն Մանուկյանն ասում է, որ թեև ողջունում է կին պատգամավորների թվի ավելացումը, այդ հարցին պետք է մոտենալ վերապահումով:

«Իհարկե, առանց կանանց ներուժի քաղաքականությունը կորցնում է: Սակայն մախաձեռնությունը կարող է «արհեստական» գենդերային քարոզչության ձև ընդունել, ինչը նույնքան վտանգավոր է, որքան կեղծված ընտրությունները,- ասում է Մանուկյանը: - Թեև մեր կուսակցությունը միացել է այդ մախաձեռնությանը, վախենում եմ, որ այն հանգեցնի շատ կին պատգամավորների ապօրինի ընտրությանը, ճիշտ ինչպես տղամարդկանց դեպքում: Քանի որ ընտրական գործընթացը կեղծվում է, դրանից կարող են դուրս մնալ այն կանայք, որոնք իրոք կարող էին ներդրում ունենալ երկրի զարգացման գործում»:

Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարար, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հիմնադիր Ռաֆֆի Հովհաննիսյանն ասում է, որ կանանց իրավունքները Հայաստանում կհաղթանակեն այն նույն օրը, երբ այստեղ հաստատվի իսկական ժողովրդավարություն:

«Կանանց իրավունքներն ու ժողովրդավարությունը երկվորյակներ են: Մեկն անհմատ է առանց մյուսի գոյության և աջակցության», - ասում է Հովհաննիսյանը:

Նա ասում է, որ հայ հասարակությունը գուցեև նույնքան մահապետական է, որքան հարևանները, սակայն այն միաժամանակ եզակի է փոփոխվելու իր ունակությամբ: Որքան շատ կանայք մտնեն քաղաքական ասպարեզ և ապացուցեն իրենց արժանիքները, այնքան արագ կփոխվի հասարակության մեջ ձևավորված նրանց իմիջը:

«Ես կուզեմայի, որ զար այն օրը, երբ կանայք արժանաճային նույն հնարավորությունների և նույն ուշադրության, ինչ տղամարդ լիդերները,- ասում է Հովհաննիսյանը: - Կանանց պետք են ոչ թե արտոնություններ, այլ հավասար իրավունքներ: Ես կասկած չունեմ, որ հայ կնոջ ունակություններն ու վճռակառուցումն այսօր հնարավորություն են ստեղծում գերազանցելու տասնամյակներ շարունակ բռնափորձային սահմանափակված Հայաստանում արձանագրված նվաճումները: Տվեք նրանց այդ հնարավորությունը, և դուք ավանստես կլինեք Հայաստանի լուռ մեծամասնության հսկայական հպարտությանն ու ներուժին»:

Հայոց խորհրդարանի յոթ տիկնայք փոքրամասնություն են կազմում: Լինելով խորհրդարանի ընդամենը 5 տոկոսը՝ նրանք ներկայացնում են Հայաստանի բնակչության մոտ 52 տոկոսը...

ԳՐԱՆՈՒԷ ԶԱԿՈՒԲՅԱԼ

ՀՀ Ազգային ժողովի յոթ կին պատգամավորներից վեցն ընտրվել է համամասնական ընտրակարգով:

Բացառություն է Հրանուշ Հակոբյանը, որը 5 անգամ պատմազավոր է ընտրվել մեծամասնական ընտրակարգով:

«Միշտ մրցում եմ տղամարդկանց հետ ու հաղթում,- ասում է նա: - Պատճառը մեկն է. իմ ընտրական գործընթացին մասնակից են դարձնում նվիրյալ մարդկանց: Իմ թիմակիցներն ու ընկերները չեն ծախվում»:



սակցությունը ներկայացնող պատգամավորին հաճախ են փորձություններ սպասում:

«Վերջերս Ազգային ժողովում հայտարարությամբ հանդես եկա: Բարձրացրած խնդրի մասին խոսելու փոխարեն տղամարդ պատգամավորները սկսեցին խոսել կին և տղամարդ տարբերության մասին,- ասում է Բիշարյանը: - Ասում են՝ դու կին ես, քեզ չենք պատասխանում: Դա ի՞նչ է նշանակում: Թե՞ կարծում են՝ հայ կինը զոգնոցը կապած պետք է խոհանոցում միայն ճաշ եփի»:

46-ամյա Բիշարյանը նաև գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի անդամ է: Ասում է, որ խորհրդարանում իր սեռը ոչ մի դեր չի խաղում: «Իմ քնքրությունն իմ ընտանիքի համար է: Երբ ես խոսում եմ երկրի կնճռոտ հարցերի մասին, մոռանում եմ, որ կին եմ, սա իմ աշխատանքն է»,- ասում է նա:

ուղացիայի մեջ:

«Կնոջ մեջ չափի զգացումը բնությունից է տրված: Ցանկացած կին աշխատում է ընտանիքը մաքուր ու քափանցիկ պահել՝ գերծ մնալով ամեն տեսակի վայրկյաններից: Կարծում եմ՝ այդ ամենը նա կարող է նաև քաղաքական դաշտ տեղափոխել»,- ասում է նա:

ՀՈՒՓՈՒՄԵ ԱՎԵՏԻՍՅԱԼ

Հոփիսիմե Ավետիսյանն ասում է, որ քաղաքականություն մտած կնոջը հեշտ չէ վախեցնել կամ ահաբեկել, քանի որ այնտեղ հայտնված կինն արդեն պատրաստ է ամեն տեսակի հարվածների:

«Սա մի դաշտ է, որտեղ բազմաթիվ ականներ կան: Եթե պատրաստ չես, հարկավոր չէ մտնել, իսկ եթե արդեն այնտեղ ես, դիմագրավիր պայթյուններից: Այս դաշտում հաստատ



«Գրանդ Քենդի» ընկերության հիմնադիրներից է և «Գրանդ Հոլդինգ» տնօրենների խորհրդի անդամ: «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության և արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ է:

Պատգամավորն ասում է, որ քաղաքականությունը դաժան պայքար է և չի խնայում ոչ ոքի: Կանանցից շատերը չեն դիմանում այդ պայքարի դաժան օրենքներից՝ չնայած ունեցած ներուժին:

«Մեր ազգային մենթալիտետը դեռ չի հասել նրան, որ անձին դիտեն անկախ նրա սեռական պատկանելությունից: Վերջերս հարց տվեցի ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանին և արժանացա անշնորհք ու լպիրշ պատասխանի,- ասում է Հովհաննիսյանը: - Այնքան ավելորդ արտահայտություններ թույլ տվեց, որ ես որպես կին չէի կարող ինձ

ՅՈՒԹ ՏԻԿՆԱՅԵ ՀԱՅՈՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ.

«...սա պարահանդեսի դահլիճ չէ»

Նա Հանրապետական կուսակցություն խմբակցության անդամ է, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

Ըստ Հակոբյանի՝ խորհրդարանում կանանց թիվն ավելի մեծ կլինի, եթե կանայք ավելի շատ վստահեին միմյանց: Նա կարծում է, որ կինը բնագործն ընտանիքի ապահովության երաշխավոր է համարում տղամարդուն:

«Բնությունից բոլորս էլ հավասար ենք ծնվում, ի՞նչ կապ ունի սեռը: Ես առնվազն վայրենություն եմ համարում, երբ սեռերի միջև տարբերություն են դնում»,- ասում է 52-ամյա Հակոբյանը:

Խնդիրը նա այլ տեղ է տեսնում: Կարծում է, որ հայ կնոջ դերը բնությունից և ազգային մտածելակերպից էլնելով որոշակիացված է. նախ՝ ընտանիք, հետո՝ հասարակական-քաղաքական կյանք:

«Բուռն ավարտելուց հետո կանայք ամուսնանում են, երեխա ունենում ու մի տասը տարով հետ մնում տարեկից տղամարդկանցից: Իսկ տասը տարով հետ ընկնել՝ նշանակում է հետ մնալ ահռելի արագությամբ զարգացող համաշխարհային գործընթացներից: Իսկ քաղաքականություն մտնելու համար ժամանակ է պետք»,- ասում է Հակոբյանը:

Ըստ Հակոբյանի՝ լիդեր դառնալուց առաջ կինը հաշվի է նստում հոր, ամուսնու, եղբոր կամ որդու կարծիքի հետ:

«Մենք ինքներս ենք մեղավոր: Երբեմն չկայացած կինը հայտնվում է այս կամ այն պաշտոնում, չի կարողանում իրեն դրսևորել՝ արդյունքում արատավորելով հայ կնոջ կերպարը,- ասում է պատգամավորը: - Կանանց զգուշավոր են մոտենում պաշտոնի նշանակելիս: Բացի այդ, հաճախ տղամարդու անկարողությունը չի երևում, իսկ կանայք քիչ են ու շուտ են աչքի ընկնում»:

Հակոբյանը կողմնակից չէ կանանց ու տղամարդկանց արհեստական հավասարության: Անիմաստ է համարում քվոտաների միջոցով խորհրդարան «տիկնիկներ» բերելը:

«Այս ամենն արդյունք չի ունենա, մինչև հավասարությունը բնականից չկայանա»,- ասում է նա:

«Ես միշտ կատակով ասում եմ, որ օրենքի նախագծերը, կառավարության որոշումները գրում են կանայք, իսկ ընդունում են տղամարդիկ: Կանայք, եկեք այնպիսի օրենքներ գրենք, որ մեզ համար ավելի լավ լինի,- ասում է Հակոբյանը: - Մենք ծնունդ, դաստիարակում, մեծացնում ենք տղամարդուն, իսկ հետո ասում՝ ղեկավարիր մեզ»:

ՀԵՂԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ

Հեղինե Բիշարյանի կարծիքով՝ քաղաքական դաշտ մտած կինը պետք է ծկուն և հանդուրժող լինի: Սակայն «Օրինաց երկիր» կու-

Անցյալ տարի Բիշարյանի նախածեռնությամբ մշակվել է «Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և հավասար իրավունքների մասին» օրենքի նախագիծ և ուղարկվել կառավարություն: Ուսումնասիրությունից հետո բացասական պատասխան են ստացել, որտեղ նշվել է, որ սահմանադրությամբ ու աշխատանքային օրենսգրքով կանայք պաշտպանված են:

Բիշարյանը կարծում է, որ վերջին 15 տարիներից հենց հայ կնոջ հզոր ուժի շնորհիվ պահպանվեցին ընտանիքները, երբ տղամարդիկ պատերազմի դաշտում էին կամ էլ Ռուսաստանում փող էին աշխատում:

«Բայց իրականում այդպես չէ: Ասում են՝ կանանց նկատմամբ խտրականություն, արգելք չկան, բայց երբ գործադիր իշխանությունում կանայք պետք է պաշտոններ զբաղեցնեն, չեն տալիս,- ասում է նա: - Օրենքի նախագիծը լրացնելու էր հենց այդ բացը՝ հնարավորություն տալով կանանց ընդգրկել [իշխանության] բոլոր օղակներում»:

«Երբ կնոջ ուսերին էր դրվում ընտանիքի պահպանման խնդիրը, որն ազգապահպանման խնդիր է, ոչ ոք չի ասում՝ կինը չի կարող, և ոչ ոք չի մխտում այդ փաստը: Իսկ երբ խոսքը վերաբերում է պաշտոնին կամ քաղաքականություն մտնելուն, բացասաբար են վերաբերվում»,- ասում է Բիշարյանը:

Պատգամավորը միանշանակ այն կարծիքին է, որ կանայք քաղաքական ասպարեզում պետք է շատանան, և նրանց դերակատարությունն անկասկած դրական ազդեցություն կունենա: Բայց նաև հաստատում է այն փաստը, որ կեղծված ընտրություններում կանայք պարտվում են:

«Ես՝ որպես մի քանի ընտրությունների մասնակցած մարդ, հստակ կարող եմ ասել, թե կնոջ համար, մանավանդ մեծամասնական ընտրակարգով, որքան թվկար է պայքարել քաղաքային հեղինակությունների ու «բեսպրեդելի» դեմ, որոնք ամեն ինչի ընդունակ են,- ասում է նա: - Իսկ կանայք նման խաղերի մեջ չեն ուզում մտնել, պարզապես արժանապատվության խնդիր է»:

Բիշարյանը նաև նշում է, որ կանանց համար խոչընդոտ են ընտրաքաղաքների աճող ծախսերը: Եթե անցկացվեին արդար ընտրություններ, մեծ գումարներ անհրաժեշտ էին լինի:

«Ես ընտրվել եմ «Օրինաց երկրի» համամասնական ցուցակով՝ պարզապես ազնվորեն պայքարելով: Եվ եթե ընտրությունների որակը փոխվի, ապա կանանց թիվը, ինչ խոսք, կմեծանա»,- ասում է նա:

Բիշարյանը նաև համոզված է, որ կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոց կլինի կանանց նշանակումը ղեկավար պաշտոնների: Նրա հավաստմամբ՝ կնոջ սխալվելու հավանականությունը շատ ավելի փոքր է, քանի որ կինը չի կարող թաղվել կաշառակերության ու կո-

կորքի ռևերանս չեն անի, սա պարահանդեսի դահլիճ չէ»,- ասում է Ավետիսյանը:

33-ամյա Ավետիսյանը կին պատգամավորներից ամենաերիտասարդն է: Ասում է, որ հարվածներից չի վախենում: Նա Միավորված աշխատանքային կուսակցությունից է (ՄԱԿ), պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի, ինչպես նաև Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի անդամ:

Ընդունելով, որ վերջին շրջանում հայ կանայք ակտիվացել են, նա այսպես է բացատրում ղեկավար պաշտոններում տղամարդկանց նախընտրելու հանգամանքը. «Միշտ հիշում եմ տատիկիս խոսքերը: Նա երկար տարիներ դեկավար է եղել և միշտ գերադասում էր կին աշխատողներ չունենալ: Երբ հարցնում էիր՝ ինչո՞ւ, պատասխանում էր՝ մի օր երեխան է հիվանդ, մի օր հոյ է: Այսինքն՝ կնոջ ընտանեկան հոգսը շատ է, և կնոջ համար առաջնայինը ընտանիքն է»:

Մեկ երեխայի մայր Ավետիսյանի կարծիքով՝ ընտանիքի և քաղաքական գործունեության համատեղումը ղժվար գործ է:

«Կիսով չափ ընտանիքում, կիսով չափ քաղաքականությունում լինելը մի՞թե լավ արդյունք կտա: Կարծում եմ՝ հենց սա է կանանց պասիվության հիմնական պատճառը,- ասում է նա: - Չմայած իրենց մտքերով, աշխատասիրությամբ ու պատասխանատվության զգացումով նրանք բարձր են տղամարդկանցից»:

Ավետիսյանը համամիտ չէ այն կարծիքին, որ կանայք քիչ են ընտրում կանանց:

«Չեմ կարծում, որ կանայք մտածված կերպով կանանց ծայն չեն տալիս, պարզապես կինն ընտրում է տղամարդուն սովորույթի ու ավանդույթի ուժով»,- ասում է նա:

Պատգամավորը կողմ է ԱԺ-ում կանանց թվի ավելացմանը, բայց նաև կարծում է, որ քվոտաների ավելացումով հարցերը չեն լուծվի:

«Հարկավոր է ունենալ պրոֆեսիոնալ խորհրդարան՝ սեռական հայտանիշով արհեստավոր ԱԺ-ի փոխարեն: Թող կանայք շատանան, սակայն խնդիր ոչ թե հարաբերակցության մեջ է, այլ որակի»:

ԱՐՄԵՆՈՒԴԻ ՀՈՒԿՆԱՆԻՍՅԱԼ

41-ամյա Արմենուհի Հովհաննիսյանը քաղաքականություն է եկել գործարար աշխարհից և առանձնապես հիացած չէ տեսածով:

«Դա իմ տեղը չէր: Իմ տեղը գործարար աշխարհում է, իսկ պետությունը, հասարակությունը լավ են ապրում, երբ ամեն մարդ իր գործով է զբաղված»,- ասում է նա:

Հովհաննիսյանը Հայաստանում հայտնի

թույլ տալ նրան պատասխանել: Գուցե մեկ ուրիշը կարողանար, բայց ոչ ես»:

Քաղաքականության մեջ հաջողության հասնելու համար կանայք պետք է լինեն առնասիրտ, նպատակասլաց, խելացի և մի կողմ դնեն հույզերը:

«Պետք է մոռանան, որ իրենք կին են: Կարողանան արհամարհել ասեկոսները և լինեն համարձակ: Բայց որքան էլ լավ աշխատեն, միևնույն է, հայտնվելու են սև փիարի ցուցակում»,- ասում է նա:

Այդուհանդերձ, նա կողմ է կնոջ լուրջ դերակատարությանը քաղաքականության մեջ, բայց կարծում է, որ այն պետք է տեղի ունենա բնականոն ձևով և ոչ թե արհեստականորեն:

«Կանանց քվոտաների ավելացմանը կողմ եմ, բայց համոզված չեմ, որ այն կբերի որակական փոփոխությունների: Կարծում եմ՝ մեզ հարկավոր է դպրոց, որտեղ ապագա պատգամավորը քաղաքական դաշտ մտնելուց առաջ կպատրաստվի: Մենք զալիս ենք անպատրաստ և մինչև պատկերացնում ենք՝ ինչպես պետք է աշխատել, ժամկետը լրանում է»,- ասում է Հովհաննիսյանը:

Հովհաննիսյանի կարծիքով՝ հայ կանանց պակասում է առաջնորդ կնոջ կերպարը:

«Մենք չունենք հայ Մարգարեթ Թեյտեր, որ մայես ու ասես՝ ուզում եմ այսպիսին լինել: Հասարակությունն այլ կերպ է ընդունում քաղաքականություն մտած կնոջ կերպարը,- ասում է նա: - Մտավորական կնոջ համար էլ ավելի դժվար է այդ պայքարի մեջ մտնելը: Այ, ո՞նց անես, որ և կին մնաս, և կարողանաս պայքարել և, դիմանալով հալածանքներին, կարողանաս հաղթել: Երբ հայ կինը կարողանա այս ամենը համարել, այն ժամանակ էլ քիչ խնդիրներ կունենան»:

ԱՎԱՐՈՂ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Աժ պատգամավոր, գրող-հրապարակախոս Ավարդ Պետրոսյանը կանանց աչքերում շարունակում է տեսնել այն մերժողական հայացքը, որն ուղղված է դեպի քաղաքականություն զմացող կանանց:

«Սովորույթը շատ ամուր է նստած նրանց մեջ: Մեր կանայք դեռ չեն հասկանում, որ տղամարդու կողքին կանգնած կինը կարող է նրանից ուժեղ ու խելացի լինել»,- ասում է նա:

Պետրոսյանը բնավ չի ցանկանում ամերիկյան մոդելով ֆեմինիստական շարժման մասնակցել՝ համարելով դա մեր ազգի հագով չկարված հագուստ:

«Առանց ուսումնասիրելու տվյալ ազգի առանձնահատկությունները՝ չի կարելի մնան քայլերի գնալ: Ինքներս մեզ կաղապարների մեջ ենք դնում: Մենք մեր հանգույն պետք է կարողանանք առաջ գնալ, կանաց-կանաց»,- ասում է նա:

Փիլիսոփայական մոտեցում քաղաքականությանը. սկզբունքները խոչընդոտ են՝ ասում է սոցիոլոգ-քաղաքական գործիչը

Գայանե Աբրահամյան

Լյուդմիլա Չարությունյանը փիլիսոփայական գիտությունների դոկտոր է և Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանը: Իր կրթական և քաղաքական գործունեության մեջ առաջնորդվում է նույն սկզբունքներով:

«Ազատությունն և արժանապատվությունն ոչ մեկին չեն մկրի, հաշվետու են ինքս ինձ, դատավոր ու պատասխանատու են ամեն ասածին ու արածին համար»:

Չարությունյանն ասում է, որ հենց այս սկզբունքներն էլ իրեն ավելի շատ խոչընդոտել են, քան օգնել որոշակի քաղաքական ազդեցություն ձեռք բերելու գործում:

Նա ասում է, որ իր կյանքի ուսուցիչները տղամարդիկ են եղել:

«Առաջին ուսուցիչը հայրս էր, ով ինձ սովորեցնում էր Վոլտեր և Ռուսո: Իմ առաջին համալսարանները նրա ընդդիմադիր ճամբերն էին: Երկրորդը մաթեմատիկայի ուսուցիչս էր, ով մի անգամ դժվար խնդիր լուծելու համար ասաց՝ շնորհակալություն: Դա իմ կյանքում առաջին շնորհակալությունն էր, և ես հասկացա, որ եթե դժվար գործեր անեն, կարժանանան շնորհակալության»,- ասում է նա:

1974 թվականին Չարությունյանը մեկ տարով մեկնում է Սորբոն՝ սովորելու: Խորհրդային տարիներին դա աներևակայելի էր քաղաքացիության 34-ամյա դասախոսի համար:

«Ես զգացի, որ գիտեմ ավելին, քան իրավունք ունեի խոսելու, բայց պետությունը դրա կարիքն ուներ»,- ասում է Չարությունյանը:

Խոսելու հնարավորություն ստացավ 1976-ին, երբ Կարեն Դեմիրճյանը նոր էր իշխանության եկել և նոր գաղափարներ հավաքելու նպատակով հանդիպում էր տարբեր մասնագետների հետ:

«Հանդիպեցի նրա օգնականի հետ: Հեռվից թերահավատորեն ժպտում էր՝ կարծես ասելով, թե ես աղջիկն ինձ ի՞նչ պետք է ասի: Սկսեցի ներկայացնել բոլոր այն բարեփոխումների ծրագրերը, որոնք, իմ կարծիքով, անհրաժեշտ էին երկրին»:



Իմ կյանքի ուսուցիչները տղամարդիկ են եղել:

Եվ ես միտումնավոր մարտահրավեր նետեցի, քանի որ նա ինձ նայում էր միայն որպես կնոջ, իսկ ես ուզում էի ցույց տալ, որ

իրենից վատ չեմ հասկանում իրավիճակը: Հետո հետո լրջացավ, գրիչն առավ ու սկսեց գրի առնել, այսինքն՝ հասկացավ, որ իր դիմաց ոչ թե պարզապես կին է, այլ բանիմաց անձնավորություն»,- պատմում է Չարությունյանը:

Բարեփոխումներով ոգևորված դասախոսը հետո միայն հասկացավ, որ դրանք իրականացնելն այնքան հեշտ չէ:

«Երբ հասկացա, երիտասարդական միամտությունն վերջացավ: Հասկացա, որ ցանկություններով հնարավոր չէ երկիր փոխել, պետք է պայքարել»:

Պայքարը սկսեց ոչ միայն խորհրդային պառլամենտից, այլև միջազգային ասոցիացիաներից, որտեղից համարձակորեն բարձրաձայնում էր Ղարաբաղի անկախության հարցը:

«Մասնակցությունը 1990 թվականին կայացած Գորբաչով-Բուշ բարձր մակարդակի հանդիպմանը հնարավորություն տվեց մամուլի ասուլիս անցկացնելու ԱՄՆ ՋԼՄ-ների հետ: Խորհրդային պետության առաջընթացի, բարեփոխումների մասին խոսելու փոխարեն սկսեցի նորից Ղարաբաղի երգը երգել»,- ժպիտով հիշում է Չարությունյանը:

Նրա համարձակությունը փակեց բարձր պաշտոններ տանող ճանապարհը: Անկախությունից հետո Չարությունյանը մասնակցել է բոլոր հինգ խորհրդարանական ընտրություններին, սակայն երբեք պատգամավոր չի ընտրվել:

«Նա, ով բացեիքաց ասում է ճշմարտությունը, ընդզույժ սխալների դեմ, իշխանության կողքին չէր կարող հայտնվել: Դե ֆակտո միշտ հաղթել են, բայց ամեն զնով դուրս են մղել՝ քաջ գիտակցելով, որ ինձ չեն կարող ասել՝ այս օրինագծին կողմ քվեարկիր, սրա դեմ մի խոսիր՝ պաշտոն կտանք: Ես կառավարելի չեմ»,- ասում է Չարությունյանը:

Չարությունյանը համոզված է, որ այս ընտրություններին կանայք կկազմեն խորհրդարանի 15 տոկոսը, բայց դա կլինի զուտ իմիտացիա:

«Խորհրդային Միության ժամանակ էլ 33 տոկոս կին կար, դա ոչինչ չէր փոխում: Նրանցից միայն 4-ն էր խոսում, մնացածն անում էր

այն, ինչ թելադրում էին վերևից: Նույնն էլ այսօր էլ»,- ասում է Չարությունյանը:

Նա ասում է, որ գիտակից, մանիպուլյացիայի չենթարկվող կին քաղաքական գործիչներն այսօր մոդայիկ չեն, նրանց չեն սիրում ոչ իշխանությունները, ոչ ընդդիմությունը: Տղամարդիկ են լիդերները, ու կանայք պետք է միայն լսողի դերում լինեն:

«Միջազգային մի հետազոտության համաձայն՝ կին լիդերները բաժանվում են երեք խմբի. կանայք, որոնք տղամարդկանց կրկնի տակ են՝ նրանք տղամարդկանց թայֆաներից են, նրանք տղամարդիկ են առաջ մղում: Մյուսը կանոն խախտողներն են, որոնք փոխում են կյանքի ընթացքը, հեղափոխություններ են անում: Հասարակությունը, որպես կանոն, չի սիրում նրանց: Երրորդ տեսակը հաշտեցողներն են, որոնք խնդիրները լուծելու, կողմերին հաշտեցնելու, բարեփոխումների միջոցով առաջ են տանում հասարակությունը»,- ասում է սոցիոլոգը:

Նրա կարծիքով՝ Չայաստանում գերիշխում են տղամարդկանց կրկնի տակ գտնվող կին լիդերները, կանոն խախտողներ չկան, իսկ իրեն դասում է հաշտեցողների խմբին, քանի որ վստահ է, որ քայլ առ քայլ բարեփոխումներով էլ հնարավոր է հաջողության հասնել:

Չարությունյանն ասում է, որ բարձր պաշտոնն ազատությունն է, որը չի փոխի ոչ մի աթոռի հետ:

«Ես համալսարանում հիմնել եմ սոցիոլոգիայի ֆակուլտետ, որտեղ ստեղծել եմ երկու մասնագիտություն՝ կոնֆլիկտաբանություն և սոցիալական աշխատանք: Կենտրոններ ու կուրսակցություն են հիմնել, բազում ուսանողներ են կրթել, ովքեր հիմա գրքեր են հրատարակում և նշում են իմ անունը՝ որպես ուսուցիչ: Ես ինձ ռեալիզացնում եմ քաղաքականությունից դուրս»,- հպարտությամբ փաստում է Չարությունյանը:

Բայց նա համոզված է, որ եթե կանայք ընտրեին իրենց ղեկը քաղաքականության մեջ և որոշումներ կայացնելու հնարավորություն ունենային, «մեր երկիրն այսքան կեղտոտ չէր լինի»:

Արտաքին գործերից՝ միջոցների հանգանակություն.

Նաիրա Մելքունյան ղեկավարը անկախ Չայաստանում

Ջուլյա Հակոբյան

1991 թվականին Չայաստանի անկախության հռչակումից հետո Նաիրա Մելքունյանը դարձել է նրա պատմության մի կարևոր մասնիկը՝ զբաղեցնելով ղեկավար պաշտոններ և գործունեություն ծավալելով Չայաստանում, Ղարաբաղում և սփյուռքում:

Բանասիրական գիտությունների դոկտոր Մելքունյանը դասավանդում էր Երևանի պետական համալսարանում, երբ անկախացումից շատ չանցած նրան առաջարկեցին առաջատար մասնագետի պաշտոն ՉՅՆ նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնում:

1993-1995 թվականներին նա ՉՅՆ արտգործնախարարի առաջին քարտուղարն էր, իսկ 1997-ին տեղափոխվեց Ստեփանակերտ՝ ստանձնելու ԼՂՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնն ու մասնակցելու խաղաղ կարգավորման բանակցություններին և այլ միջազգային գործընթացների:

2003 թվականից Մելքունյանը «Չայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենն է և այդ պաշտոնում, ի թիվս այլ պարտականությունների, օժանդակել է հիմնադրամի՝ Ղարաբաղում իրականացվող ճանապարհաշինական ծրագրի համար միջոցներ հանգանակելու գործին:

Մելքունյանը չի համարում, որ իր կարիերան առանձնանում է միայն այն փաստի շնորհիվ, որ ինքը կին է, այլ կարծում է, որ մարդուն բացառիկ են դարձնում ոչ թե սեռը, այլ ուժեղ անհատականությունն ու կամքը:

«Ինձ հաճախ են հարցնում՝ արդյոք դժվար չէ՞ քաղաքականության մեջ: Չեմ կարծում, որ այդ հարցի պատճառը միայն այն է, որ կին եմ,- ասում է 53-ամյա գործիչը: -



Ամեն խնդիր ունի իր լուծումը, պարզապես պետք է գտնել ճիշտ ուղին:

Իհարկե, դժվար է, ինչպես բոլորի համար, այդ թվում՝ նաև տղամարդկանց: Ինչպես հենշտ չէ լինել բժիշկ կամ ուսուցիչ: Միշտ էլ դժվար է անել գործը, եթե անում ես ինչպես հարկն է և ուզում ես ուրիշներից լավ անել»:

Իր ժամանակակիցների ման Մելքունյանն ասում է, որ Չայաստանում քաղաքականությունը «տղամարդու գործ» է: Սակայն նրա կարծիքով՝ կանայք էլ են մասամբ մեղավոր, որ քաղաքականության մեջ և կառավարման համակարգում տղամարդիկ ճնշող մեծամասնություն են կազմում:

Այդ ոլորտում առկա խոչընդոտները դասախոս-նախարար-գործադիր տնօրենը համարում է մարտահրավեր:

«Իմ աշխատանքը սովորեցրել է ինձ, որ չկան անելանելի վիճակներ: Ինչպես հաճախ «Ելք չկա» նշանի փոխարեն տեսնում ենք «Ելքը՝ հակառակ կողմից» նշանը: Ամեն խնդիր ունի իր լուծումը, պարզապես պետք է գտնել ճիշտ ուղին»:

Մելքունյանն ավելացնում է, որ հասարակության մտածելակերպը փոփոխվում է, և վերջին տարիներին նկատվում է տեղաշարժ. շարքային կանայք դառնում են հասարակական լիդերներ:

«Ես զգում եմ կանանց ապրումակցումը: Դա նշան է, որ կանայք պատրաստ են աջակցելու միմյանց: Դա շատ կարևոր է, քանի որ հստակ գիտակցում են, որ կինը կարող է լինել նույնքան պատասխանատու, որքան տղամարդը, և նույնիսկ ավելի»,- ասում է նա:

Չայ կանայք նշանակալի, թեև չտարփողվող դերակատարություն են ունեցել անկախ Չայաստանի պատմության մեջ: Մելքունյանի կարծիքով՝ հայ կնոջ ամենակարևոր հատկանիշը պատասխանատվու-

թյունն է, ինչն ամենահամոզիչ կերպով արտահայտվեց 90-ականների սկզբին, երբ կանայք իրենց ուսերին վերցրին տան հոգսը, երբ չկային ո՛չ էլեկտրականություն, ո՛չ ջուր:

Մելքունյանը ողջունում է հայ կին լիդերների նախաձեռնությունը՝ խորհրդարանում կանանց թվի ավելացման մասին և հավատում է, որ այդ բարեփոխումը կստիպի կուսակցությունների ղեկավարներին ավելի ուշադիր ընտրել նաև տղամարդ թեկնածուներին:

Չնայած իր հաջող կարիերային՝ Մելքունյանը համամիտ է այն կարծիքին, որ կինն է օջախ պահողը և երեխաների հիմնական կրթողը: Նա ինքը մկրի է իր ժամանակն ընտանիքին և սկսել է լրիվ դրույքով աշխատել դստեր 8 տարին լրանալուց հետո: (Այժմ նրա դուստրն ամուսնացած է և աշխատում է բանկում:)

«Գեներային առաջընթացի վրա ուղղակիորեն ազդում են գիտատեխնիկական առաջընթացը, սոցիալական բարեփոխումները և երկրի բարեկեցության աճը, և մենք տեսնում ենք, որ ամենաշատ կին լիդերներ կան հենց մամա երկրներում,- ասում է Մելքունյանը: - Այսօր ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում ավելի ու ավելի շատ կանայք են պատրաստ կիսելու տղամարդկանց պատասխանատվությունն իրենց երկրի պապագայի համար»:

Ես չեմ ուզում հայ կանանց համեմատել արևմտյան երկրների կանանց հետ: Ամեն երկիր յուրահատուկ է, և այնտեղ կանայք հաջողության հասնելու տարբեր ուղիներ ունեն: Պարզապես ուզում եմ ցանկանալ հայ կանանց լինել ավելի վստահ և հավատալ սեփական ուժերին»:

Ամբողջական փաթեթ.

Ալիս Ադամյան՝ մայր, ակտիվիստ, արվեստագետ, մտավորական...

Մշակույթի նախկին փոխնախարար, վարչապետի խորհրդական, ջութակահար և 28 տարվա մանկավարժ Ալիս Ադամյանը կնոջ մեջ ամենից շատ կարևորում է կին լինելը:

«Ինչ պաշտոն էլ զբաղեցնի, կինը պետք է չկորցնի իր կանացիությունը», - ասում է 3 արվեստագետ զավակների մայրը:

Ղարաբաղյան շարժման սկզբին հիմնած «Չայ մտավորական կին» մշակութային կազմակերպությանը նա սկսեց աջակցել կանանց՝ տարբեր միջազգային միջոցառումներին ցուցադրելով նրանց ստեղծագործական ներուժը:

«Այն տարիներին չգիտեիք կանանց իրավունքների մասին, և ինձ համար մեծ փորձ էր 1995 թվականին մասնակցել Պեկինի Կանանց համաշխարհային համաժողովին, որից հետո կանանց հայաստանյան շարժումը սկսեց ինչ-որ չափով միջազգային հետքերով քայլել», - ասում է Ադամյանը:

Ադամյանի կարծիքով՝ երկրի համար շոյալություն է չօգտագործել երկրի բնակչության 52 տոկոսը կազմող կանանց ներուժը:

«Ազգային ժողովում կանայք կազմում են ընդամենը 5 տոկոս, իսկ կառավարությունում՝ ընդամենը 2 տոկոս: Դա չափազանց քիչ է տղամարդկանց այս հսկայական աշխարհում, որտեղ կանայք այդքան խնդիրներ ունեն, որոնք բարձրածայնելու և լուծում տալու համար անհրաժեշտ են գիտակ կանայք», - ասում է Ադամյանը:

Ազգային ժողովն արդեն ընդունել է կուսակցական ցուցակներում առնվազն 15 տոկոս կանանց ընդգրկելու մասին փոփոխությունը, սակայն, ըստ Ադամյանի, դա քիչ է:

«Դա բավարար չէ, պետք է ձևակերպվեր, որ արդյունքում լինի 15 տոկոս ընտրված պատգամավոր, այլպես փորձը ցույց է տալիս, որ կուսակցական ցուցակներում կանանց գրում են վերջին տեղերում, և եթե կուսակցությունը հարթահարի միայն 5 տոկոսը՝ ապա ոչ մի կին չի մտնի Ազգային ժողով», - ասում է Ադամյանը:

Նա կարևորում է կանանց մասնակցությունն առաջիկա ընտրություններին, չնայած ընտրվելու հավանականությունը փոքր է: Հիմնական պատճառը, ըստ Ադամյանի, կանանց ֆինանսական միջոցների պակասն է, ինչը հայաստանյան ընտրություններում մեծ դեր է խաղում:

«Օրենսդրորեն կինը հավասար իրավունքներ ունի, մենք միացել ենք կանանց իրավունքների համաշխարհային մի շարք կոնվենցիաների, սակայն այդ ամենը դեռևս թղթի վրա է, - ասում է Ադամյանը: - Հաճախ կնոջ ընդգրկումը իմիտացիոն բնույթ է կրում, դեկլարատիվ է՝ տեսեք, մենք կնոջը տեղ ենք տալիս, օրինակ, մեր կուսակցական ցուցակներում, բայց որտեղ՝ ամենավերջում, պաշտոն ենք տալիս, բայց միայն այն պաշտոնները, որ զուրկ են երկրի համար կարևոր որոշումներ կայացնելու հնարավորությունից»:

Նա համոզված է, որ կանայք կարող ուժ են, որոնց պետք է հնարավորություն ընձեռել, սակայն չպետք է մոռանալ նաև ընտանիքի կարևորությունը:

«Պետք է դաստիարակենք աղջիկներ, որոնք կլինեն ակտիվ, ինքնավստահ, բայց կզմահատեն նաև ընտանիքի դերը, լավ տանտիկին կլինեն, որ չկորցնենք մեր ընտանիքի սյունը լինելու ավանդույթը»:



Մեզ պետք են «գիտակ կանայք» խնդիրները բարձրածայնելու համար:



Ես հասկացա, որ առավել մեծ դերակատարություն կարող են ունենալ քաղաքացիական հասարակություն ձևավորելու գործում:

Թռչելու հարկադրված.

ողբերգությունը խթանեց Անահիտ Բախշյանի առաջնորդի կարիերան

Երևանի թիվ 27 դպրոցի տնօրեն Անահիտ Բախշյանի համար կյանքը բաժանվում է երկու փուլի՝ 1999 թ. հոկտեմբերի 27-ից առաջ և հետո:

Այդ ճակատագրական օրը նրա ամուսինը՝ խորհրդարանի փոխխոսնակ Յուրի Բախշյանը, դարձավ Ազգային ժողովի շենքում կատարված ահաբեկչության 8 զոհերից մեկը:

«27-ի ողբերգությունից առաջ ես ինձ զգում էի կին ամենալայն իմաստով. ոչ միայն ճաշ էի եփում, այլև հագուստ էի կարում ընտանիքիս 5 անդամների համար: Կին էի, և հաճելի էր լինել մի քիչ թույլ ու զգալ թիկունքին կանգնած տղամարդուն», - ասում է Բախշյանը:

«27-ից հետո դադարեցի կին լինելուց: Երբ ամուսինս Ազգային ժողովում սպանվեց, ես հասկացա, որ ողջ կյանքում պետք է մենակ պայքարեմ, շատ հարցերի լուծում միայնակ գտնեմ»:

Իսկ նրան հուզող հարցերը բազմաթիվ էին: «Լիովին փոխվեց իմ վերաբերմունքը հասարակության, պետության նկատմամբ, և հասկացա, որ առավել մեծ դերակատարություն կարող եմ ունենալ քաղաքացիական հասարակություն ձևավորելու գործում»:

Նրա պայքարի դաշտը դարձավ կրթությունը, մասնավորապես, թիվ 27 դպրոցը: Նրա նախաձեռնությամբ այն դարձավ առաջին դպրոցը Հայաստանում, որտեղ ստեղծվեցին Աշակերտական խորհուրդ և կառավարություն:

«Ես շատ եմ կարևորում ազատությունը, երեխային դեռ մանկուց պետք է սովորեցնել պաշտպանել իր իրավունքները, լինել ընդվզող, ունենալ իր տեսակետը», - ասում է Բախշյանը:

Ըստ նրա՝ հայ կանայք էմանսիպացված են, բայց մինչև որոշակի սահման, որից այն կողմ տղամարդիկ կասեցնում են նրա առաջխաղացումը:

«Եթե քաղաքականության մեջ կանայք 50 տոկոս կազմեն, մեր երկիրը կտրուկ կփոխվի, բայց տղամարդիկ գիտեն, որ կինը չի մտնի իրենց կեղտոտ խաղերի մեջ, կինն ավելի ազնիվ ու պատասխանատու է, կինը բնագրաբար իր երեխայի համար անվտանգություն է ուզում, որի համար ապահով կդարձնի ամբողջ երկիրը և ոչ միայն իր տունը»:

Բախշյանը հիշում է, որ երբ 24 տարեկանում առաջին անգամ մտավ դասարան որպես ֆիզիկայի ուսուցչուհի, սարսափելի անվստահ էր, պայքարելու փոխարեն կարող էր միայն լաց լինել: Իսկ ութ տարի առաջ՝ 52 տարեկանում, նա ստանձնեց դպրոցի տնօրենի պաշտոնը, և դպրոցը դարձրեց քաղաքացիական կրթության մոդել:

«Աստիճանաբար սովորեցի մենակ թռչել: Ինձ համար ուղեցույց է Ռիչարդ Բախի «Ճայը», որն առանձնացավ իր երանից, սովորեց թռչել ու ընկերներին էլ նույն խորհուրդը տվեց: Ես դա ամուսն եմ իմ դպրոցում»:

Միջավայր՝ փոփոխությունների համար.

Նախկին նախարարի համոզմամբ՝ խտրականության իսկական թիրախն ինտելեկտն է

Կարինե Դանիելյանը նորանկախ Հայաստանի առաջին կանանցից էր, որոնք կոտրեցին ավանդական գեղեցիկ կարծրատիպերը՝ խոհանոցից տեղափոխվելով կառավարական շենք:

1990 թվականին Դանիելյանին նշանակեցին Երևանի փոխքաղաքապետ, իսկ 1991-ին՝ բնապահպանության նախարար:

Կոչումով բնապահպան Դանիելյանին իր գործի կարևորությունը զգաց 80-ականներին, երբ բարձրացվեցին «Նաիրի-տի» ընդլայնման և Հայաստանում ատոմակայանի թափոնների տարածաշրջանային գերեզմանոց կառուցելու ծրագրերը:

«Այս խնդիրներից ձևավորվեց բնապահպանական շարժումը, որի հիմնադիրներից եմ: Մինչև վերջ պայքարեցիք, ու Հայաստանը փրկվեց թափոնների գերեզման դառնալու աղետից», - ասում է Դանիելյանը:

Նախկին նախարարը դժվար ճանապարհի հարթեց էկոլոգիական աղետի մեջ գտնվող Հայաստանի համար, սակայն դժվարություններին փոխարինեցին հիասթափությունները, և նա հասկացավ, որ վերևներում ուզում են, որ իրենց չխանգարի:

«Ես հետո իմացա, որ 1991-ին ստեղծված բնապահպանության նախարարությունը զուտ ձևական կառույց է, և ես շատ բան փոխել չկարողացա: Բոլորն էլ ասում էին՝ թող Կարինե զբաղվի իր բնապահպանությամբ, բայց մեզ չխանգարի», - ասում է Դանիելյանը:

Սակայն Դանիելյանը միշտ էլ խանգարել է, ոչ որպես կին, այլ միայն որպես բնապահպան:

«Առանձնապես խտրականություն չեմ զգացել, բայց համոզված եմ, որ կինը ստիպված է շատ ավելի պրոֆեսիոնալ լինել, քան կողքի տղամարդիկ, որ չասեն՝ կնոջ մազը երկար է, խելքը՝ կարճ... Եթե տղամարդու շատ սխալներ ներվում են, կնոջը սխալվելու իրավունք չի տրվում», - ասում է Դանիելյանը:

Դանիելյանի համար աշխատանքային միակ դիսկոմֆորտը որպես կին եղել են կառավարության նիստերը, որտեղ բոլորն առանց բացառության տղամարդիկ էին:

«Այնտեղ պետք է շատ զգույշ լինեի, քանզի մեկ սխալը բավական էր, որ ասեին. «Դե, կին ա, էլի»:

Ամենակտիվ բնապահպանի կարծիքով՝ քաղաքականության մեջ մտնում են միայն այն կանայք, ովքեր ունեն ներքին մեծ մղում որևէ հասարակական հիմնահարց լուծելու համար:

«Կանայք հարստամալու, վայելքներ ունենալու շատ ուրիշ ճանապարհներ ունեն, քաղաքականության դժվարին ճանապարհը վայելքներին հասնելու լավագույն միջոցը չէ, այսինքն՝ նրանք տղամարդկանց նման իշխանություն, փող և դրանից բխող բոլոր վայելքներին տիրանալու համար չեն գալիս քաղաքականություն, այլ հուզող խնդիրները լուծելու համար: Այդ պատճառով էլ շատ ավելի սկզբունքային են, հե-

տամուտ իրենց առջև դրված հիմնախնդիրների լուծմանը», - ասում է Դանիելյանը:

Նրա համոզմամբ՝ այսօր խտրականության թիրախը ոչ թե կինն է, այլ ինտելեկտը:

«Այսօր առկա է ինտելեկտի ֆեմինիզացում, ինչը բնորոշ է անցումային շրջանի երկրներին: Այսօր աղջիկներն ավելի լավ սովորող են, գիտությանը նվիրված: Բայց չկա սոցիալական պատվեր՝ որոշում ընդունող մակարդակներում ինտելեկտուալ մարդկանց ընդգրկելու: Եթե լուծվի այդ խնդիրը, ինքնըստինքյան, կանայք կզբաղեցնեն ավելի բարձր պաշտոններ»:

Ըստ Դանիելյանի՝ ինչպես բնության մեջ իզական և արական սեռի տարբեր պոտենցիալները զուգակցվում և հավասարակշռում են միմյանց, այդպես էլ պետք է լինի հասարակության և դրա կառավարման մեջ, իսկ քանի դեռ անտեսվում է կանանց ներուժը, հասարակության լիարժեք զարգացումն անհնար է:



Համոզված եմ, որ կինը ստիպված է շատ ավելի պրոֆեսիոնալ լինել:

ՅՈՒ ՏԻԿՆԱՅԻ ՀԱՅՈՓ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ.

«...սա պարահանդեսի դահլիճ չէ»

61-ամյա Ալվարդ Պետրոսյանը «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության և ԱԺ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է: Դաշնակցությունն

քական գործիչները մեղմացնում են բարոյա հոգեբանական մթնոլորտը:

Նա կարծում է, որ քաղաքական գործիչ լինելը մասնագիտություն չէ, մարդը պետք է ներքուստ օժտված լինի խորամանկությամբ, ինքնավստահությամբ, համարձակությամբ և անհողորդ կեցվածքով:

«Իսկ ազատ և արդար ընտրությունների դեպքում հասարակության կողմից ընդունված կին քաղաքական գործիչը միանշանակ կարող է հաղթանակել»,- ասում է նա: «Իսկ կանայք, որքան էլ փխրուն հոգի ու մեծ խիղճ ունեն, նույնքան էլ ուժեղ են ու համբերատար: Նրանք կարող են պայքարել ահաբեկչության, վախի, ստի ու կեղծիքի դեմ»,- ասում է նա: - Այնպես որ, կանանց թվի ավելացումը օրենքի դաշտում կունենա դրական արդյունք, քանի որ կանայք օրինապահ են և օժտված պատասխանատվության մեծ զգացումով»:

ՅԵՐՄԻՆԵ ՆԱՂԱՅԱՆ

Ազգային ժողովի պատգամավոր Յերմինե Նաղայանը կարծում է, որ քաղաքական դաշտում կանանց գործունեության բացակայում է մի կարևոր հանգամանակ.



«Բացակայում է կապը հավասար իրավունքների, հնարավորությունների ու արդյունքների միջև: Հռչակելով հավասար իրավունքներ՝ ուզում ենք հավասար արդյունքներ ստանալ՝ առանց կանանց հավասար հնարավորություններ տալու»,- հարցնում է Նաղայանը:

1995 թվականից խորհրդարանի պատգամավոր, 47-ամյա Նաղայանի կարծիքով՝ օրենսդրությամբ կանանց տրված ազատությունը «ծակական» է: Իրականում կան մի շարք խոչընդոտներ, որոնք թույլ չեն տալիս հավասար արդյունքների հասնել:

Հիմնական խոչընդոտը, նրա կարծիքով, հենց կանայք են: «Կանայք ասում են՝ բնությունը մեզ այլ կերպ է ստեղծել, մենք տարբեր ենք, հասարակությունը կզրկի մեզ հավասարության պայմաններից»,- ասում է նա: - Հենց նման մտածելակերպից է հարկավոր ձերբազատվել»:

Պատգամավորն ասում է, որ Հայաստանի իշխանական բուրգը ցույց է տալիս, որ ներքևի հատվածում, որտեղ 34-ներն են, կանանց թիվը բավական մեծ է, բայց որքան բարձրանում են վեր, այնքան այդ թիվը նվազում է:

«Եթե որակները կանանց ազդեցությունը քաղաքական որոշումների վրա, ապա պետք է փաստենք, որ աշխատանքային բոլոր պրոցեսներում՝ ներքևում և միջին հատվածում, կանայք ներկա են, իսկ բուրգի վերնամասում, որտեղ որոշումներ են կայացվում, նրանց թիվը միանգամից անհասկանալիորեն նվազում է»,- բացատրում է պատգամավորը:

Խնդրի միակ լուծումը Նաղայանը տեսնում է ԱԺ-ում կանանց քվտաների ավելացման մեջ: Ըստ նրա՝ եվրոպական, հատկապես սկանդինավյան երկրներում վերջին 20-30 տարվա ընթացքում քվտաների ճանապարհով խորհրդարաններում հասան կանանց 40-50 տոկոսանոց ներկայացվածության:

«Քաղաքական որոշումները դրանից միայն շահում են՝ դառնալով ավելի մարդկային: Միշտ ասել են, որ պարտադրանքի ուժի փոխարինելու կգա հանոգմունքի ուժը»,- ասում է Նաղայանը:

Նաղայանի հանոգելու կարողությունն առաջին անգամ փորձություն է անցել 1995 թվականին:

«1995-ին, երբ առաջարկվել էի մեծամասնականով, 20 թեկնածուներից 19-ը տղամարդ էին: Դժվար էր պայքարելը, որովհետև իշխանության պայքարը, որպես այդպիսին, ազդեցիկ պայքար է, ասում է Նաղայանը: - Դժվար է պայքարել, երբ բացակայում են խաղի կանոնները: Իհարկե, դա տղեղ խաղ է, բայց այսօր ընտրական գործընթացներում հենց այս օրենքներին են մեծ տեղ տալիս»:

Նա ասում է, որ այն կանայք, որոնք մտնում են այդ «խաղերի» մեջ, պետք է օժտված լինեն մեծ աշխատասիրությամբ, լավ պատրաստվածությամբ ու մարդասիրությամբ:

«Շատ են կարևորում, որ կուսակցությունները կանանց որոշակի թիվ պարզապես պարտադրված չբերեն խորհրդարան: Նրանք պետք է նախ նախապատրաստեն կին քաղաքական գործիչներին և հետո միայն բերեն խորհրդարան»,- ասում է նա:

Փայանե Մկրտչյան
Լուսանկարները՝ Կարեն Միրզոյանի

Բարեփոխումների ջատագովը.

ՀԺԿ մամուլի խոսնակը պայքարում է հանուն փոփոխությունների



Դենց կանայք են միշտ իրենց ուսերին կրել անենածանր բեռը:

Երբ Հայաստանի ժողովրդական կուսակցության քաղաքականության անդամ, անենակտիվ ընդդիմադիր կին գործիչ Ռուզաննա Սահակյանը գնում է հանրահավաքի, նրա դեռահաս աղջիկն ասում է. «Էլի գնում ես փողոցները չափափեղու՞: Երևանի կենտրոնում մի տեղ չկա, որտեղ քո ոտնահետքերը չլինեն»:

Նախկին լրագրող և քաղաքական մեկնաբան, այսօր ՀԺԿ և ԱԺ «Արդարություն» խմբակցության լրատվական ծառայության ղեկավար Սահակյանը քաղաքականության մեջ վաղուց է, բայց ոչ որպես քաղաքական գործիչ, այլ քաղաքական գործընթացները մեկնաբանող:

«Երևի այդքանով էլ բավարարվեի, եթե չլինեին 88 թվականն ու անկախությունը: Այդ տարիներին ես որպես լրագրող անընդհատ հակասությունների մեջ էի Ազգային (հանրային) հեռուստատեսության ղեկավարության հետ, քանի որ տեսնում էի, թե անկախությունից հետո իշխանությունն ինչպես է աղավաղում քաղաքական գործընթացները, և չէի կարող լռել»:

Իշխանությունների անօրինականությունների մասին ֆիլմ նկարահանելուց և այդ ֆիլմը ցուցադրելու պահանջից հետո Սահակյանը 1994 թվականին հեռացվում է հեռուստատեսությունից:

«Ես չհասա նրան, որ ցուցադրեն իմ ֆիլմը, բայց իրավիճակն այնպես սրեցի, որ ինձ հեռացրեցին աշխատանքից»,- ժպիտով վերհիշում է Սահակյանը:

Սահակյանը վերադարձավ հեռուստատեսություն 1997-ին՝ քաղաքական հաղորդումներ չափելու պայմանով, և ստեղծեց հեղինակային «Հայուհի» թոք-շոուն, որտեղ հնարավորություն էր տալիս կանանց արտահայտելու իրենց կարծիքը տիրող իրավիճակի, այդ թվում՝ քաղաքական գործընթացների մասին:

Անկուսակցական լինելու իր սկզբունքին, որին հետևում էր անգամ խորհրդային տարիներին, Սահակյանը դավաճանեց 1998 թվականին՝ տեսնելով «ընտրությունների սարսափելի կեղծիքները» և ի նշան բողոքի անդամագրվեց Կարեն Դեմիրճյանի հիմնադրած ՀԺԿ-ին:

Հոկտեմբերի 27-ի ակնառես, ցույցեր կազմակերպելու և մասնակցելու համար ձերբակալված Սահակյանը 2000 թվականին կրկին հեռացվեց հեռուստատեսությունից՝ այս անգամ կուսակցական պատկանելության համար:

«Հոկտեմբերի 27-ը շատ բան փոխեց իմ մեջ: Բացի այն, որ իմ աչքով տեսա այդ ոճրագործությունը, տեսա նաև, թե ինչ անարդարություններով է իրականացվում դատավարությունը: Հասկացա, որ այսպես չի կարող շարունակվել, պետք է պայքարել»,- ասում է Սահակյանը:

Պայքարի ելած կինն ասում է, որ կանայք ավելի ակտիվ ու համարձակ են դարձել, բայց խիստ կասկածում է, որ քաղաքական վերնախավը կհանդուրժի նման կանանց:

«Քաղաքական վերնախավը շատ ավելի հետադեմ է, քան հասարակությունը: Երբ մասնակցեցի Կենտրոնի համայնքի թաղապետի ընտրություններին, համոզվեցի, որ հասարակությունը գրեթե 100 տոկոսով պատրաստ է ընդունելու կնոջը քաղաքականություն»:

Սահակյանի կարծիքով՝ դրան մեծապես նպաստել են այսօրվա քաղաքական գործիչները, քանի որ քաղաքականությունը ընդգծված տղամարդու դեմք ունի: «Եվ այդ դեմքն այնքան էլ համակրելի չէ: Մարդիկ զգում են կնոջը քաղաքականություն բերելու անհրաժեշտությունը»,- ասում է Սահակյանը:

Նա պայքարում է ինչպես անարդարությունների, այնպես էլ այն տարածված կարծիքի դեմ, թե քաղաքականությունը կնոջ խելքի բանը չէ:

«Ասում են՝ ծանր գործ է: Բայց հենց կանայք են միշտ իրենց ուսերին կրել անենածանր գործերը»:

Փայանե Աբրահամյան



այն կուսակցություններից է, որոնք պայքարում են կանանց թիվը խորհրդարանում ավելացնելու համար:

«Բնության մեջ հայելային անդրադարձումներ գոյություն ունեն: Որտեղ կա տղամարդ, այնտեղ պետք է կին լինի, նրանք փոխադարձաբար օգնում են միմյանց»,- ասում է նա: - Կանայք օրինապահ են, պատասխանատու և զգուշավոր»:

Նա համոզված է, որ բնագոյային ներքին տեսողությունը հատուկ է միայն կանանց: Իսկ քաղաքական կամ հասարակական ոլորտ մտնել առանց բնավորությամբ տիրական լինելու հնարավոր չէ: Ըստ Պետրոսյանի՝ հարկավոր է կարողանալ ասել ի՞նչը հստակ ներկայացնել՝ առանց ծանծրացնելու, ավելորդ ազդեցիկության և խեղճանալու:

«Տեսել են՝ ինչպես են վիրավորել կին քաղաքական գործիչին: Փառք Աստու, ինձ հետ դեռ նման բան չի պատահել: Կնոջը բավական է հայիոյել, ու նա խոցելի է դառնում, իսկ տղամարդիկ իրար հայիոյում են ու չեն խոցվում: Բայց հարց է առաջանում. այդ կի՞նն է ավելի ողորմելի վիճակում, թե՞ վիրավորող տղամարդը»,- ասում է նա:

Պետրոսյանը պատմում է՝ ինչպես են իրեն ահաբեկել 2003 թվականի ԱԺ ընտրություններից առաջ՝ սեփական կուսակցությանը և նախագահին պաշտպանելու համար: Անանուզ զանգերով սպառնացել են սպանել որդուն:

«Այդ պահին ոչինչ չասացի, որ չմտածեն, թե ինչ-որ բանից վախեցած կին եմ: Ես վախկոտ չեմ, ես չեմ սիրում բռնություն, չեմ սիրում, երբ սպառնում են իմ կամքին ու մտքին»,- պատմում է պատգամավորը: - Ես չեմ փախչում, եթե մտնում եմ, ապա գնում եմ մինչև վերջ, բայց նաև չեմ զնա բարոյական չափանիշները տրորելու գնով: Իմ մեջ չկա ամեն գնով հարթելու կիրք: Եվ հենց այս հատկանիշն է բնորոշ շատ կանանց»:

Իսկ քաղաքական, հասարակական գործունեությունից Ալվարդ Պետրոսյանը պաշտպանվում է ընտանիքում:

«Սիրում եմ լինել տանը, խոհանոցում: Սիրում եմ լինել իմ գրքերի հետ՝ կարդացվող ու գրվելիք: Սիրում եմ գրիչը, թուղթը, դրանք սովորություններ են, որոնք պաշտպանում են իմ տեսակն ու անհատականությունը: Դրսի իմ ակտիվությունը բնավ կապ չունի կենցաղային ակտիվության հետ»,- ասում է Պետրոսյանը:

ԵՄՍԱ ԽՈՒՂԱՐՄԱՆ

61-ամյա Էմմա Խուղարմյանը 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում ութ մարդկային կյանք խլած ահաբեկչության ակնառեսներից է:

«Որքան էլ սարսափելի էր հոկտեմբերի 27-ը, այն ինձ չէր կարող ստիպել իրաժարվել իմ ընտրած քաղաքական պայքարից: Դեռ ավելին, այն ինձ ուժ տվեց և ավելի վճռական դարձրեց»,- ասում է նա:

Խուղարմյանը անկուսակցական է, ընդգրկված չէ պատգամավորական որևէ խմբում կամ խմբակցությունում: Նա արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ է:

Նրա կարծիքով՝ կնոջ զգայուն և փխրուն լինելը հաճախ խանգարում է քաղաքականության մեջ կոշտ դիրքորոշում ունենալուն: Նա համամիտ է այն կարծիքին, որ կանանց առջև ծառայած խնդիրները առնչվում են արմատացած ընկալումների և «ազգային ինքնությանը»:

«Բայց ես նաև կարծում եմ, որ ինչպես իր սեփական ընտանիքում է կինը ձգտում հասնել խաղաղ և բարեկեցիկ կյանքի, այնպես էլ կարող է վերաբերվել սեփական երկրի բարօրությանը»,- ասում է նա: - Սակայն կանանց թվի ավելացումը չպետք է լինի պարտադրանք, այն պետք է բնական լինի»:

Ըստ նրա՝ կնոջ գործունեությունը քաղաքականությունում անհրաժեշտ է, և դա պայմանավորված է կնոջ համբերատար, կազմակերպված ու պատասխանատու լինելով: Կին քաղա-



պարմաները կարողությունն առաջին անգամ փորձություն է անցել 1995 թվականին: «1995-ին, երբ առաջարկվել էի մեծամասնականով, 20 թեկնածուներից 19-ը տղամարդ էին: Դժվար էր պայքարելը, որովհետև իշխանության պայքարը, որպես այդպիսին, ազդեցիկ պայքար է, ասում է Նաղայանը: - Դժվար է պայքարել, երբ բացակայում են խաղի կանոնները: Իհարկե, դա տղեղ խաղ է, բայց այսօր ընտրական գործընթացներում հենց այս օրենքներին են մեծ տեղ տալիս»:

Մարդու իրավունքների պաշտպանուհին.

Լարիսա Ալավերդյանի խոսքերով՝ «ուժային» հասարակությունում կանայք մարզինալացվում են

Գայանե Արահանյան

Հայաստանի առաջին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանի քաղաքական ակտիվ գործունեության արձագանքները հասնում են 70-ական թվականներ, երբ երիտասարդ ֆիզիկոսն ընտրվեց Երևանի քաղաքապետի պատգամավոր:

«Այդ բոլոր պաշտոնները ձևական էին, բայց ես շատ ակտիվ աշխատում էի ու փորձում պաշտպանել ինձ դիմողների իրավունքները, ինչը զարմացնում էր շատերին,- ասում է Ալավերդյանը: - Հիմնականում դիմում էին բնակարանային խնդիր ունեցող քաղաքացիներ: Հիշում եմ՝ մեծ դժվարությամբ Լալայանց փողոցում մի խնդիր լուծեցի»:

Տարօրինակ զուգահեռությամբ՝ օմբուդսմեն Ալավերդյանին բազում քաղաքացիներ դիմեցին Լալայանց փողոցի բնակարանների խնդիրներով, սակայն նրանց հարցերի լուծման պատրաստակամությունն էլ դարձավ օմբուդսմենի պաշտոնից ազատման պատճառներից մեկը:

Պատերազմը ստիպեց ստեղծել «Ընդդեմ իրավական կանայականությունների» իրավապաշտպան կազմակերպությունը, որը 1991 թվականից ղեկավարում է Ալավերդյանը:

«Բավական դժվար էին պատանդների և անօրինական ձերբակալվածների ազատ արձակման համար տարվող աշխատանքները, սակայն ողջ գործունեության ընթացքում իմ կին լինելն ինձ երբևէ չի կաշկանդել,- ասում է Ալավերդյանը:

«Օմբուդսմենի պաշտոնը ստանձնելուց հետո ավելի շատ շահարկվում էր իմ ոչ թե կին, այլ դարաբաղի լինելը»:

Ալավերդյանը կարծում է, որ հաճախ ավանդույթները խե-

ղաթյուրվում են, հայերին վերագրվող ավանդապաշտությունն արհեստածին է: Հայ կնոջ խաղաղացած կարևոր դերն արտացոլված է պատմության մեջ, հայ կինը միշտ ունեցել է իր խոսքն ասելու իրավունք:

Հայ առաջին կին օմբուդսմենը հանգզված է, որ քաղաքական դաշտից կնոջ դուրս մղումը կապված է սոցիալ-քաղաքական ավանդույթների հետ:

«Ցանկացած պետությունում, որն ուժային է, ոչ իրավական, կինն անպայման մարզինալացվում է, և դա կապված է ազգային ավանդույթների հետ,- ասում է նա: - Կառավարական մարմիններում ավելի մեծ թվով կանայք ունեցող երկիրը նվազ «ուժային» է լինում: Այսօր պետպաշտոնյաներին բնավ ձեռնտու չէ կանանց ընդգրկումը, քանի որ նրանց հետ ոչ իրավական դաշտում գործարքների մեջ մտնելն ավելի դժվար է, քան տղամարդկանց»:

Ըստ նրա՝ այսօր էլ կանանց ընդգրկումը ձևական բնույթ է կրում, քանզի նրանք նշանակվում են հիմնականում այնպիսի պաշտոնների, որտեղ լուրջ որոշումներ չեն ընդունվում և մեծ չեն ֆինանսական ռեսուրսները՝ վատնելու համար: Այն ոլորտներում, որոնց դռները բաց են կնոջ առաջ, կարևոր քաղաքական որոշումներ չեն ընդունվում:

«Կանանց մարզինալացումն արդյունք է պաշտոնյաների մի փոքր խմբի աշխարհաքաղաքական կողմնորոշման, որոնք տիրում են իշխանության բոլոր լծակներին և երկրի համար ծանրակշիռ որոշումներ կայացնելու մեծաշնորհին,- ասում է Ալավերդյանը: - Մարզինալացումը կանանց թույլ կամ ոչ պրոֆեսիոնալ լինելու հետևանք չէ»:



Իմ ողջ գործունեության ընթացքում կին լինելն ինձ երբևէ չի կաշկանդել:

Կնոջ հայացք.

մշակույթի նախարարն ուզում է, որ տղամարդիկ տղամարդ լինեն, իսկ կանայք՝ կին

Ջուլյա Հակոբյան

Հասնիկ Պողոսյանի կյանքում ամենակարևորն ընտանիքն է: Շատ հայ կանանց նման նա նվիրված մայր և կին է: Սիրում է ձմեռվա համար պահածոներ փակել, տունը մաքրել, ճաշ եփել և ընտանիքի հետ հանգստյան օրերը քաղաքից դուրս անցկացնել: Մի խոսքով՝ նա իսկական հայ կին է:

Սակայն նա նաև եզակի կին է: 46-ամյա Պողոսյանը Հայաստանի կառավարության միակ կին նախարարն է: Անցյալ տարվա մայիսին նա նշանակվել է մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար: Անկախության 15 տարիների ընթացքում նա մշակույթի ութերորդ նախարարն ու այդ պաշտոնը զբաղեցրած երկրորդ կինն է:

«Ես նախարար եմ աշխատանքի վայրում, իսկ տանն ամուսնունս համար կին եմ և երեխաներիս համար մայր,- ասում է Պողոսյանը: - Ընտանիքը կնոջ համար առաջնային է, և չեմ կարծում, որ երբևէ որևէ բան կստիպի ինձ փոխել իմ այս կարծիքը»:

Աշխատանքի վայրում նրան ճանաչում են որպես 130 հոգանոց աշխատակազմի խիստ ու սկզբունքային ղեկավարի: Աշխատանքային օրվա ընթացքում նա սովորաբար անցկացնում է 10-15 համոզիչ և երբեմն աշխատանքի բերումով տուն է հասնում կեսգիշերին:

Երիտասարդության և մշակույթի հարցերը հոգեհարազատ են նրան, թեև ոչ այնքան, որքան ընտանիքի հարցերը: Նրան կարելի է համարել կանացի ներուժի խորհրդանիշ, սակայն ոչ մի դեպքում՝ ֆեմինիստական գաղափարախոսության ջատագով: Կնոջ առաջին պարտականությունը տունն է՝ ասում է նա: Կրթությանը կենսաբան Պողոսյանը միշտ աշխատել է՝ ընդհատելով աշխատանքը 14 և 23 տարեկան որդիների ծննդյան առնչությամբ:

«Աշխատել եմ համալսարանն ավարտելուց հետո, բայց ոչ թե ինքնահաստատման, այլ ամուսնունս օժանդակելու և ընտանիք պահելու համար»:

Միջնակարգ դպրոցում 8 տարի մանկա-

վարժ աշխատելուց հետո 1986 թվականին Պողոսյանն աշխատանքի է անցել Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական ընկերությունում (մշակույթի ոլորտում Հայաստանի ամենակապիվ կազմակերպու-



Իմ կարծիքով՝ քաղաքականությունը տղամարդկանց գործն է:

թյուններից մեկը, որը կազմակերպում է համերգներ ու ցուցահանդեսներ), որտեղ նա հասավ խորհրդի նախագահի պաշտոնին:

«Նախարարի պաշտոնի առաջարկը համարեցի այն ժամանակի հետ, երբ զգացի, որ երեխաներս ավելի ինքնուրույն են դարձել: Նրանք դեռևս ունեն իմ կարիքը, և ես ամեն ինչ անում եմ նրանց հետ ավելի շատ ժամանակ անցկացնելու համար: Երբեմն ստացվում է, երբեմն՝ ոչ: Եվ սա պատասխանատու պաշտոնի ամենավատ կողմն է: Բայց եթե նախարար չլինեիր, անշուշտ, ինձ նվազ երջանիկ կզգայի»:

Անկուսակցական Պողոսյանը համակարծիք չէ որոշ առաջադեմ կանանց, թե Հայաստանի քաղաքական դաշտը թերի է կանանց փոքր թվի պատճառով: Նա ասում է, որ կանայք դեռ շատ անելիք ունեն ընտանիքում, և զուտ գենդերային հավասարությունը բավական չէ, որ նրանք ստանձնեն «տղամարդկանց» պարտականությունները:

«Իմ աշխատակազմում կան փոքր երեխա ունեցող կանայք: Երբեմն առավոտյան նրանք ուշանում են, երբեմն աշխատանքի չեն գալիս երեխաների հիվանդության պատճառով,- ասում է նա: - Պե՛տք է, արդյոք, խիստ լինեն նրանց նկատմամբ: Որպես դեկավար, թերևս, այո, բայց որպես կին՝ ես հասկանում եմ նրանց: Կուզենայի, որ ծննդաբերության արձակուրդը լիներ այնքան երկար, որ կանայք հանգիստ վայելեին իրենց երեխաների հետ հաղորդակցման յուրաքանչյուր օրը՝ փոխանակ մտածելու, թե ինչպես ընտանիքը պահելու համար փող վաստակեն»:

Պողոսյանը, որին նախարարի պաշտոնին է նշանակել վարչապետը, ասում է, որ կանայք և քաղաքականությունն անհամատեղելի են: Սակայն նա կուզենար, որ Հայաստանում ավելի շատ կին օրենսդիրներ լինեին՝ կանանց և երեխաների հարցերը լրբեհիգ անելու համար:

«Իմ կարծիքով՝ քաղաքականությունը տղամարդկանց գործն է: Երբեմն ինձ հարցնում են, որ եթե այդպես եմ մտածում, ի՞նչ գործ ունեն այս պաշտոնում: Նախևառաջ, ես չեմ կարծում, որ մշակույթի նախարարությունը գտնվում է մեծ քաղաքականության կիզակետում: Ես շատ ուրախ եմ, որ իմ աշխատանքն անդրադառնում է մշակույթի վրա, որը ցանկացած հասարակության նեցուկն է: Ես իմ հոգին ու սիրտն եմ ներդնում իմ աշխատանքի մեջ, քանի որ վաղը նոր սերունդը, ներառյալ՝ իմ զավակները, վայելելու են դրա պտուղները»:

Պողոսյանն ասում է, որ այնքան էլ լավ չի

պատկերացնում, թե կանայք ինչ նկատի ունեն՝ գենդերային հավասարություն ասելով:

«Իրենց բնությամբ կանայք մի առաքելություն ունեն, տղամարդիկ՝ մեկ այլ,- ասում է նա: - Ոչ մի կենսաբանական տեսակի սեռերն ամեն ինչում հավասար չեն: Փոխել բնությունը և ձևավորել կանանց համար ուրիշ սոցիալական կարգավիճակ՝ ճիշտ չէ»:

Պողոսյանն ասում է, որ գենդերային հավասարության հարցերում հաջողության հասած որոշ եվրոպական երկրներում բավել են մեկ այլ երևույթի հետ՝ խախտվում են ընտանեկան արժեքները: Նա նաև նշում է, որ ազդեցիկ գենդերային քաղաքականությունը հանգեցնում է կանանց և տղամարդկանց ոչ բնական հարաբերությունների:

«Մի անգամ մի կին հյուր ունեցիք Դանիայից: Երբ ամուսինս առաջարկեց օգնել նրան հագնելու վերարկուն, նա ապշահար սասց. «Մի՞թե Հայաստանում տղամարդիկ դեռ այդպես են վերաբերվում կանանց»: Արդեն զարմանալու հերթն իմն էր: Ես, անշուշտ, չեմ ուզում տեսնել նույն բանը Հայաստանում, երբ տղամարդիկ դադարեն տղամարդ լինելուց»:

Պողոսյանն ասում է, թե ուզում է, որ հայ տղամարդիկ ավելի ուժեղ ու արժանավոր լինեն, իսկ կանայք՝ ավելի կանացի ու հանդուրժող:

«Այն, ինչ հարմար է եվրոպային, Հայաստանին հարմար չէ, քանի որ մենք տարբեր պատմություն, մշակույթ և մտածելակերպ ունենք,- ասում է նախարարը: - Ուստի ինձ դուր չի գալիս, երբ մարդիկ ասում են, թե Հայաստանը հետ է, քանի որ այստեղ գենդերային հարցը գերակայություն չէ: Կարծում եմ, որ եվրոպական երկրներում կան շատ այլ ոլորտներ, որտեղ նրանք առաջընթաց են արել, և մենք էլ պետք է հետևենք նրանց»:

Այդ ոլորտներից է մշակույթը: Պողոսյանն ասում է, որ հայ կանայք իսկապական պատասխանատվություն ունեն՝ դաստիարակելու մշակութային առումով կիրթ երեխաներ:

«Հայտնի է, որ մայրերը երեխաների լավագույն դաստիարակներն են, և ես նրանց այլընտրանք չեմ տեսնում: Ոչ դպրոցը, ոչ պապերն ու տատերը չեն կարող տալ այն, ինչ տալիս է մայրը: Հայ կանայք այնքան անելիք ունեն հատկապես այսօր, երբ հասարակությունն ունի ինտելիգենտ մարդկանց կարիք»:

«ԱրմենիաNow»-ի այս հատուկ թողարկումը պատրաստվել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանության և Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ու ամերիկյան ժողովրդի ֆինանսավորմամբ իրականացվող IREX-ի CMSPA ծրագրի օժանդակությամբ: Հոդվածներն անգլերեն կարդալու համար այցելեք www.armenianow.com կայքը: Արտահայտված կարծիքները միշտ չէ, որ արտացոլում են Մեծ Բրիտանիայի դեսպանության, IREX-ի և USAID տեսակետները:

This special edition of ArmeniaNow was produced with the support of the British Embassy and by IREX CMSPA Program, funded by USAID and the American people. The views expressed in this publication do not necessarily reflect the views of the British Embassy, IREX or USAID.

Հրատարակիչ՝ «Նոր ժամանակ» լրագրողների վերապատրաստման կենտրոն» ՀԿ
Գրանցման վկայական՝ 03U-055743
Հասցեն՝ Ղազար Փարպեցի 26/9
Տպագրատուն՝ «Տիգրան Մեծ»
Տպագրանակ՝ 15000 օրինակ

Բացի լրագրողներից ու լուսանկարիչներից, թողարկման վրա աշխատել են նաև «ԱրմենիաNow»-ի հետևյալ աշխատակիցները.

- Պատասխանատու խմբագիր՝ Խնկազարի օգնական՝ ՏՏ Գրիգորյան
- Քրիտիկական խմբագիր՝ Բաբկեն Ջուրայան
- Քրիտիկական խմբագիր՝ Քրիտիկական խմբագիր՝ Լևոն Բաղդասարյան
- Քրիտիկական խմբագիր՝ Թարգմանության խմբագիր՝ Սուրեն Մուսայելյան
- Քրիտիկական խմբագիր՝ Թարգմանության խմբագիր՝ Ռուզաննա Ամիրաթյան
- Քրիտիկական խմբագիր՝ Ռուբեն Ջեբելյան

Ձևավորող՝ No article or part of it can not be copied, reprinted or used elsewhere without mentioning this issue as a source. (C)2007 ArmeniaNow.com. All rights reserved